

**ԹԵՐԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՉԳԱՑՈՒՄԻ ԵՎ  
«ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ» ՄԱՍԻՆ  
Գագիկ Տերտերյան**

Այսօր մեզանում զգալի տեղ են գրավում ինքնապախարակման, հաճախ ազգային ինքնանսեմացման հասնող տրամադրությունները: Թերարժեքության բարդությի բնույթ կրող նման միտումները երբեմն հիմնավորվում են «պատմական» հղումներով: Շեշտվում է հատկապես հայերիս մոտ պետական մտածողության բացակայության, վճռորոշ իրավիճակներում դավաճանության դիմելու, անընդմեջ պարտությունների մասին: Հաղթանակներն անգամ երբեմն ներկայացվում են որպես զուտ «բարոյական»՝ դրանց վերագրելով անօգտակարության երանգ:

Մենք հեռու ենք հայության պատմությունը միայն փառաբանելու, ավելորդ գունազարդելու մտքից: Համոզված ենք նաեւ, որ ինքնաքննադատությունն առաջընթացի նախադրյալներից մեկն է: Առարկության եւ անհանգստության տեղիք են տալիս ինքնանսեմացման միտումը եւ ազգի, պետության զարգացման տեսանկյունից՝ նման մոտեցման ոչ արդյունավետությունը: Այս համատեքստում նկատենք, որ հայ ժողովրդի անցած ուղին ինչ-որ չափով նման է ցանկացած հին քաղաքակրթություն ներկայացնող ազգի պատմությանը, որտեղ եղել են հավատարմության ու դավաճանության օրինակներ, ռազմավարական իմաստության եւ քաղաքական կարճամտության դրսեւորումներ:

Հաղթանակների եւ պարտությունների խնդիրը, թերեւս, հատուկ պարզաբանման կարիք ունի: Հայության վարած բազմաթիվ հաղթական ճակատամարտերը, փորձագետների գնահատմամբ, արժանի տեղ են գրավում համաշխարհային ռազմարվեստի պատմության մեջ: Մեր պարտությունները նույնպես արժանի են հատուկ վերաբերմունքի, եւ այս հարցում բոլորովին ամոթ չէ սովորել ուրիշներից: Բերենք մի օրինակ: Ղրիմի պատերազմում /1854-1855թթ./ անգլիական արիստոկրատիայի ներկայացուցիչներից կազմված հեծելազորը, կատարելով հրամանատար լորդ Կարդիհանի հրամանը, անցավ հարձակման մի կիրճով, որի երեք կողմում տեղակայված էին ռուսական հրետանին եւ հետեւակը: Գրոհող հեծելավաշտերը գրեթե ամբողջովին ոչնչացվեցին: Միջադեպը ռազմարվեստի պատմության մեջ հայտնի է «թեթեւ հեծելազորի գրոհ» անվամբ եւ հրամանատարության կոպիտ սխալի դասական օրինակ է: Սակայն

բրիտանացիներն այլ կերպ մոտեցան խնդրին. «թեթև հեծելագործի գրոհը» առայսօր մատուցվում է որպես բրիտանական ազնվականության քաջության եւ անվեհերության օրինակ: Համարվում է, որ անգլոսաքսերը կարող են պարտվել առանձին ճակատամարտերում, բայց ոչ՝ պատերազմում: Ինչպես տեսնում ենք, այդ իրողությունը պայմանավորված է նաեւ անգլոսաքսոնյան ընտրանու կողմից իրենց /եւ այլոց/ պատմությունն իմաստավորելու եւ ազգային շահերին համարժեք մեկնաբանելու կարողությամբ:

Առանձնահատուկ դիտարկման կարիք ունի «պետական մտածողության բացակայության» թեզը: Ակնհայտ է, որ առանց նման մտածողության առկայության հայությունն այսօր դժվար թե գոյություն ունենար: Մասնավորապես, այս իրողության ամենաթարմ վկայությունն են մեր հանրության եւ նրա քաղաքական ընտրանու գործողությունները խոշոր աշխարհաքաղաքական կատակլիզմի՝ Սառը պատերազմում պարտություն կրած Խորհրդային Միության փլուզման պայմաններում. դժվարագույն իրադրությունում, հաճախ միակ ճիշտ քայլերի միջոցով, հաջողվեց պահպանել մեր պետականությունը եւ հաղթել ռազմական ու տնտեսական չափանիշներով մեզ գերազանցող հակառակորդին:

Մի փոքր մանրամասնենք: Խորհրդային համակարգի փլուզումը եւ երրորդ հանրապետության ձեւավորումը լրջագույն հիմնախնդիրներ առաջացրին: Պատերազմի եւ տնտեսական կոլապսի պայմաններում ձեւավորվող երկրում վերացան սովորական համարվող սոցիալական երաշխիքները, ներդրվեցին նոր համակարգին բնորոշ անողորմ հասարակական հարաբերություններ, փլուզվեց հանրության զարգացման համար առանցքային նշանակություն ունեցող գիտակրթական համակարգը: Այս դրամատիկ իրողությունները զուգորդվում էին մարդկային ողբերգություններով եւ, անշուշտ, խանդավառության առիթ չէին տալիս: Հավելյալ տագնապ էին առաջացնում նոր ձեւավորված քաղաքական ընտրանու գործողությունները, որը պետական կառավարման փորձ չունեցրեց: Միեւնույն ժամանակ, արդարությունը պահանջում է արձանագրել, որ այլ՝ ավելի կարող ընտրանի, որն իր վրա կվերցներ այդ ժամանակահատվածի անսպասելի զարգացումների ողջ պատասխանատվությունը, մեր հանրությունը չունեցրեց:

Այսօր կարծես թե պետության կայացման ամենադժվարին փուլն անցյալում է: Առկա են որոշակի հաջողություններ, սակայն կան բազմաթիվ չլուծված հիմնահարցեր գրեթե բոլոր ոլորտներում: Ավելին, երբեմն հնչում են տեսակետներ, որ ներկայումս կիրառվող մեթոդաբանությունը եւ հեռանկարային մտածելակերպը կարող են եւ բավարար

չլինել այդ հիմնահարցերից կարելորագույնների լուծումները գտնելու համար. քաղաքական ընտրանին եւ վերլուծաբանները հաճախ են արտահայտվում այն ոգով, թե հետագա զարգացման համար անհրաժեշտ է կատարել կամային քայլեր, որոնք իրենց մեջ պետք է կրեն «հոգեւոր հեղափոխության» տարրեր: Այդ կապակցությամբ նշենք, որ արդի պայմաններում ցանկացած քաղաքական գործողության, այդ թվում նաեւ «հոգեւոր հեղափոխության» հաջողությունն, առաջին հերթին, պայմանավորված է դրանք իրագործող տեխնոլոգիաների կատարելությամբ:

Քաղաքակրթական զարգացումներին նվիրված իր աշխատություններում Առնոլդ Թոյնբին «Արեւմուտքի» առավել մրցունակ լինելը, մասնավորապես, պայմանավորում է «տեխնոլոգիական գաղտնիքները» պահպանելու եւ ընդհանրապես տեխնոլոգիաները զարգացնելու ունակությամբ: Այստեղ, թերեւս, պարզաբանման կարիք կա. «տեխնոլոգիա» հասկացությունը վերաբերում է ոչ միայն բնագիտության եւ տեխնիկայի ոլորտի կիրառական նշանակություն ունեցող մշակումներին, այլեւ մարդկային կենսագործունեության ողջ ոլորտին, որտեղ ներառված են եւ կենցաղային թվացյալ մանրուքները, եւ խոհափիլիսոփայական մոտեցումները: Այդ համախումբը կազմում է ամենատարբեր տեխնոլոգիաներից բաղկացած մի համակարգ, որն արդեն երկար ժամանակ ապահովում է պայմանական «Արեւմուտքի» առաջատարությունը եւ որին /իսկ դա պետք է ընդունել/ ձգտում է հասնել կամ փորձում է նմանվել մնացյալ աշխարհը:

Անշուշտ, արեւմտյան տեխնոլոգիական համակարգը հեռու է անթերի լինելուց: Այն, հաճախ միանգամայն արդարացված, բողոք է առաջացնում. այսօր այդ համակարգի վերիմաստավորման ու բարեփոխման վերաբերյալ բազմաթիվ առաջարկություններ ու կոչեր են հնչում: Սակայն տպավորությունն այնպիսին է, որ այս իրադրությունում գործում է նույն այդ համակարգում նախապես ներդրված ինքնապահպանման կամ, այլ խոսքերով՝ ինքնազարգացման եւ կատարելագործման մեխանիզմը: Եվ եթե անգամ մարդկությունը մի գեղեցիկ օր հրաժարվի առկա արեւմտյան մոդելը գերակա համարելուց եւ փորձի ձեւավորել մի նոր աշխարհակարգ, ապա կարելի է համոզված լինել, որ առանց «արեւմտյան» փորձի իմաստավորման նման նախագիծը կլինի թերի եւ կառաջացնի առավել մեծ հիմնախնդիրներ, քան դրանք կան այսօր:

Վերոնշյալի համատեքստում, թերեւս, իմաստ ունի նշել նաեւ մեկ այլ հանգամանք, որի մասին քաղաքական կոռեկտության տեսանկյունից այնքան էլ ընդունված չէ խոսել: Արեւմտյան տեխնոլոգիական համակարգի հեղինակներն են, գլխավորապես, ընդհանրական հնդեվրոպական

քաղաքակրթությանը պատկանող ժողովուրդները, որոնք կազմում են քրիստոնյա աշխարհի հիմնական մասը եւ որոնց թվին ենք պատկանում նաեւ մենք /անշուշտ, դրանից չի հետեւում, թե մեզ խորթ է արեւելյան մտածողությունը կամ Արեւելքն՝ ընդհանրապես/: Այսինքն՝ հայությունը, լինելով այդ քաղաքակրթության մի ուրույն մաս, համատեղելի է արեւմտյան տեխնոլոգիական համակարգին: Մասամբ դրանով են պայմանավորված առավել համակարգված երկրներում մեր ազգակիցների հաստատվելու ձգտումն ու այնտեղ հաջողության հասնելու կարողությունը:

Այսպիսով, կան նախադրյալներն այն բանի, որ «հոգեւոր եւ տեխնոլոգիական» հեղափոխությունը մեր հանրության համար անհասանելի տեսլական չէ: Խնդիրը լուծելու համար նվազագույնը պետք է ձերբազատվել մեզ հետապնդող եւ արգելակող թերարժեքության զգացումից: Այս խնդրի լուծումը նույնպես կարիք ունի որոշակի տեխնոլոգիաների կիրառման: Մասնավորապես, ավելի քան հրատապ խնդիր է, նախ եւ առաջ, իրագործել արդի եզրաբանության միջոցով մեր պատմության մեկնությունը: Տեխնոլոգիական հաջորդ փուլը ենթադրում է արդի տեղեկատվական մեթոդներով ստացված արդյունքների ամրապնդումը հասարակական գիտակցությունում:

## ԱՐԱՐԱՑԱԾ ՀԱՅԵՐ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

### *Ռուբեն Մելքոնյան*

Այլադավան եւ ծպտյալ հայերի թեմայի ուսումնասիրությունն ի հայտ է բերում մինչ օրս շատ քիչ հայտնի եւ միեւնույն ժամանակ հետաքրքիր մանրամասներ: Հանրահայտ փաստ է, որ Հայոց ցեղասպանության ժամանակ որոշ հայեր ընդունել են իսլամ՝ կոտորածից եւ արքորից փրկվելու համար, եւ ներկայումս Թուրքիայում կան քրդացած, թուրքացած հայեր, որոնց մի մասն իրեն արտաքուստ է միայն այդպես ներկայացնում: Սակայն ծպտյալ եւ իսլամացած հայերի թեմայի շրջանակներում գրեթե չի լուսաբանվել եւ շատերի համար անհայտ է այն իրողությունը, որ ներկայիս Թուրքիայում ապրում են նաեւ հազարավոր արաբացած հայեր:

Թուրք պատմաբան Սալիմ Ջոհջեն, արձագանքելով Թուրքական պատմական ընկերության նախագահ Հալաչօղլուի՝ այլադավան հայերի թեմայի շուրջ բարձրացրած աղմուկին, «Աքսիոն» հանդեսի 664-րդ համարում տպագրված հարցազրույցում ասել է. «Յուսուֆ Հալաչօղլուի ասածները ճիշտ են ու նորություն չեն», եւ նշելով թեմայի շրջանակներում արդեն նոր բացահայտումներ անելու անհրաժեշտության մասին՝ ավելացրել, որ հայերը ոչ միայն քրդացել կամ թուրքացել են, այլեւ արաբացել: «Սղերթում, Հաթայում (Ալեքսանդրետ), Ուրֆայում, Մարդինում բնակվող հայերն արաբացել են եւ այսօր արաբախոս են»,– հայտարարել է նա: Միեւնույն ժամանակ, Ջոհջեն նշում է, թե Թուրքիայում կան նաեւ ասորացած հայեր: Ակնհայտ է, որ թուրքական պետական տարբեր օղակներ, վերլուծական, հետազոտական կենտրոններ զբաղված են ծպտյալ եւ իսլամացած հայերի մասին նոր տվյալներ ձեռք բերելու գործով: Նույն «Աքսիոն» հանդեսում հրատարակվել են ներկայումս Թուրքիայում բնակվող ծպտյալ հայերի բնակության վայրերի, թվաքանակի մասին տվյալներ, ինչպես նաեւ նշվում է, թե նրանք պաշտոնապես որ ազգի կամ կրոնական համայնքի ներկայացուցիչներ են համարվում: Հետաքրքրական է, որ հենց թուրքական հանդեսի տեղեկության համաձայն՝ այդ տվյալներն անընդհատ փոփոխվում են, քանի որ աշխատանքները ներկայումս էլ շարունակվում են: Ստորեւ ներկայացվող ցուցակում, որը վերցված է «Աքսիոն» հանդեսից, համդիպում են նաեւ տվյալներ, որոնք ցույց են տալիս, թե որ շրջաններում կան արաբացած հայեր:

<b>ՔԱՂԱՔԸ</b>	<b>ԾՊՏՅԱԼ ՀԱՅԵՐԻ ԹԻՎԸ</b>	<b>«ՊԱՇՏՈՆԱԿԱՆ» ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ</b>
Դիարբեքիր	1000 ընտանիք	քուրդ, ասորի, ալեւի
Մալաթիա	3655 ընտանիք	քուրդ-ալեւի
Կեսարիա	5000 ընտանիք	թուրք
Էյազիզ	1000 ընտանիք	քուրդ, ալեւի
Վան	4000 ընտանիք	քուրդ
Թունջեւի	2000 ընտանիք	քուրդ-ալեւի
Շանլըուրֆա	3500 ընտանիք	քուրդ, արաբ
Սղերթ	1200 ընտանիք	արաբ, քուրդ
Հաթայ (Ալեքսանդրետ)	1100 ընտանիք	արաբ
Բիթլիս	200 ընտանիք	քուրդ
Էրզրում	3000 ընտանիք	քուրդ, ալեւի, թուրք
Երզնկա	1300 ընտանիք	ալեւի, քուրդ
Սեբաստիա	2000 ընտանիք	քուրդ, ալեւի
Մարդին	1500 ընտանիք	արաբ
Քահրաման		
Մարաշ	3000 ընտանիք	քուրդ, ալեւի
Ադըյաման	1600 ընտանիք	քուրդ
Ադանա	2000 ընտանիք	քուրդ, արաբ, ալեւի

Ինչպես երեւում է վերը բերված աղյուսակից, արաբացած հայերը, ըստ թուրքական աղբյուրների, բնակվում են Սղերթի, Հաթայի, Շանլըուրֆայի, Մարդինի եւ Ադանայի շրջաններում: Սակայն, այնուամենայնիվ, հետաքրքրական է այն հարցը, թե ինչու պետք է հայերը, փրկելու համար իրենց կյանքը, իսլամ ընդունելուց հետո հանդես գային որպես արաբներ եւ ոչ քրդեր կամ թուրքեր: Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներին սահմանակից շրջաններում հայերի արաբանալը, թերեւս, կարելի է պայմանավորել արաբական ցեղերի հետ սերտ շփումներով, ինչն էլ ստիպել է այդ տարածքների հայերին կոտորվելուց խուսափելու համար արաբանալ: Սակայն այս խնդրի վերաբերյալ այլ հավաստի աղբյուրների եւ անձնական դիտարկումների արդյունքում ձեռք բերված փաստերը որոշակի հարցեր են առաջացնում: Մասնավորապես, արաբացած հայեր կան ոչ միայն նշված վայրերում, այլեւ, որքան էլ զարմանալի է, Սասունի, Մուշի գյուղերում, եւ այս մասին թուրքական

աղբյուրները լռում են: Ի տարբերություն այլ շրջանների, այս վայրերում «դյունե» (հավատափոխ) ասելով՝ նկատի են ունենում ոչ միայն քրդացած հայերին, այլև արաբացածներին: Տեղի բնակիչները շատ լավ են ճանաչում միմյանց, եւ գրեթե բոլորը գիտեն արաբացած եւ արաբախոս հայերի իրական էթնիկ պատկանելության մասին, ինչպես նաեւ գիտեն, թե ովքեր են իրականում քրդացած հայեր, ովքեր՝ թուրքացած եւ այլն: Ի վերջո, հենց արաբացած հայերը չեն ժխտում իրենց հայկական ծագումը, չնայած չի էլ կարելի ասել, թե շատ բացահայտ են դա ընդունում: Յետաքրքիր է, որ արաբացած հայերը բնակվում են նախկին հայկական գյուղերում, օրինակ՝ Սասունի Մճկեղ գյուղը ներկայումս արաբացած հայերով է բնակեցված, բացի այդ, նրանք գիտեն բոլոր հայկական եկեղեցիների, սրբավայրերի, գերեզմանատների տեղերը: Յենց արաբացած հայերի խոստովանությամբ՝ իրենք այդ վայրերի բնիկների ժառանգներն են: Եթե սա հիմք ենք ընդունում ու հաշվի առնում, որ դրանք նախկին հայկական գյուղեր են, ապա պարզ է դառնում, որ արաբացած հայերին կարելի է համարել այդ գյուղերի նախկին հայ բնակչության սերունդներ:

Սակայն արաբացած հայերը թուրքիայում ապրող այլ կրոնափոխ հայերի խմբերից՝ մասնավորապես քրդացածներից, ունեն էական տարբերություններ. այսպես, օրինակ՝ արաբացած հայերը, ի տարբերություն քրդացածների, վայելում են թուրքական պետության որոշակի վստահությունը: Այս հանգամանքը, կարծում ենք, կարող է օգնել՝ հասկանալու համար թուրքիայում արաբացած հայերի գոյության հանելուկը: Արաբացած հայերն իրենց մի աստիճան բարձր են համարում քրդացած հայերից, քանի որ նրանք ոչ թե դեմ են թուրքական պետությանը, այլ ընդհակառակը՝ թուրքական պետությունը հովանավորում է իրենց: Ավելին, թուրքական պետությունն արաբացած հայերին տալիս է զենք, զինամթերք, նույնիսկ աշխատավարձ, որպեսզի նրանք պայքարեն PKK-ական քրդերի դեմ եւ պահեն իրենց գյուղերը: Իսկ գաղտնիք չէ, որ հենց վերոնշյալ շրջաններում են, ինչպես անցյալում, այնպես էլ հիմա, տեղի ունենում քրդական հուզումները: Գաղտնիք չէ նաեւ, որ արդեն տեւական ժամանակ այդ վայրերում ընթանում է չհայտարարված պատերազմ քրդական զինյալների եւ թուրքական կանոնավոր բանակի միջեւ: Եվ ահա այս պատերազմում արաբացած հայերը թուրքական պետության կողմից դիտվում են որպես լրացուցիչ պատնեշ քրդերի դեմ:

Յայերի արաբանալը եւ հատկապես այդ վայրերում բնակվելը, մեր կարծիքով, կարելի է մեկնաբանել եւ բացատրել հետեւյալով.

1. Հայերը ցեղասպանության տարիներին մտել են արաբական աշիրեթները, արաբացել, իսլամացել եւ արդեն որպես իսլամ արաբներ շարունակել ապրել իրենց գյուղերում: Վարկածն ունի հավանականության որոշակի տոկոս, սակայն առաջացնում է նաեւ որոշ հարցեր, մասնավորապես՝ օսմանյան կամ թուրքական կառավարությունները, տեղյակ լինելով սրան՝ ինչո՞ւ են թողել այդ ամենը:

2. Ցեղասպանության ժամանակ, աքսորի ճամփով մի կերպ Դեր Ձոր, Սիրիա հասած հայերը կամ նրանց երեխաները, հետագայում ընդունելով իսլամ, վերադարձել են Թուրքիա՝ իրենց նախնիների գյուղերը, բայց արդեն որպես արաբներ: Այս փաստարկի օգտին է խոսում մի քանի հանգամանք. նախ՝ լիբանանահայերի եւ սիրիահայերի շրջանում անցկացրած մեր հարցումները ցույց են տվել, որ ցեղասպանությունից հետո այնտեղ ապաստանած հայերից եղել են մարդիկ, ովքեր վերադարձել են Թուրքիա: Փաստը, որ ցեղասպանության տարիներին արաբական որոշ ցեղերի մոտ եղել են որբ հայ երեխաներ, ապացուցում են մի շարք աղբյուրներ, այդ թվում եւ Պոլսո շայոց պատրիարքարանի 1921թ. կազմած մի տեղեկանք, որտեղ նշված է, թե արաբական որ ցեղերի մոտ ինչքան հայ որբեր են գտնվում: Ըստ այդ ցուցակի՝ Դեր Ձորի շրջանի Ձիբար, Էգաբար եւ Վարաքորա ցեղերի մոտ գտնվել են առնվազն 500, Ժիբուր (Ձիբուր) ցեղի մոտ՝ 600, Շամոր (Շեմմար) ցեղի մոտ՝ 700, Անեզաի (Անեզա) ցեղի մոտ՝ 2000, Ռեսուլայնի շրջանի չեչենական ցեղերի մոտ՝ 2000 հայ որբ երեխաներ: Չի կարելի բացառել, որ այս հայ երեխաները, ինչպես նաեւ փրկված այլ հայեր էլ հենց կազմել են արաբացած հայերի կորիզը: Սակայն այս ամենի վրա, մեր կարծիքով, կարող է լույս սփռել նաեւ այն հանգամանքը, որ արաբացած հայերը Թուրքիա են վերադարձել հատկապես 1930-ականների վերջին եւ 40-ականների սկզբին, այն էլ՝ թուրքական պետության համաձայնությամբ, ավելին՝ աջակցությամբ: Սիրիահայերը կամ լիբանանահայերը, որոնց հետ մենք զրուցել ենք, խոստովանում են, որ, իրոք, իրենց բարեկամները կամ հարազատները ցեղասպանությունից որոշ ժամանակ անց վերադարձել են Արեւմտյան Հայաստան: Այս վերադարձի ժամկետները շատ հաճախ համապատասխանում են 1930-ականների վերջերին: Այստեղ կարելու է հաշվի առնել հետեւյալ փաստը. ինչպես նշեցինք, այդ տարածքներում են տեղի ունեցել քրդական ապստամբություններն ու խռովությունները, եւ հենց Դերսիմում 1938թ. արյան մեջ ճնշվել է ալեկների ապստամբությունը: Դրան նախորդել են այլ ապստամբություններ եւ բախումներ: Այսինքն՝ շրջանը եղել է շարունակական ժողովրդական հուզումների

վայր, եւ արաբացած հայերին բերելով ու բնակեցնելով այս վայրերում՝ թուրքական կառավարությունը ստեղծել է հակակշիռ քրդերի դեմ:

Անշուշտ, հետաքրքիր է իմանալ նաեւ արաբացած հայերի մոտ հայկական ինքնագիտակցության պահպանման կամ դրա աստիճանի մասին, սակայն այդ ամենի վերաբերյալ տվյալները հակասական են եւ ոչ ստույգ: Ըստ մի վարկածի, եթե նրանց մեջ լինէր ցեղասպանության վրեժի գաղափար, ապա դժվար թէ նրանք համագործակցեին թուրքական իշխանությունների հետ: Բայց մյուս կողմից՝ այստեղ պարզորեն կարելի է նկատել դարեր շարունակ թուրքական քաղաքականության հետքը, այն է՝ իրար դեմ լարել հարեւանությամբ ապրող էթնոսներին եւ շահել, ինչը տեղի է ունեցել նաեւ այս պարագայում: Միեւնույն ժամանակ, քրդերի դեմ արաբացած հայերի պայքարում կարելի է տեսնել հենց նույն վրեժի գաղափարը, քանի որ գաղտնիք չէ, եւ ներկայումս էլ քրդերն իրենք են խոստովանում, որ ցեղասպանության ժամանակ գործել են հայերի դեմ, կոտորել նրանց, թալանել, տիրացել ունեցվածքին եւ գյուղերին: Միգուցե թուրքական պետությունն օգտագործել է հենց այս հանգամանքը՝ արաբացած հայերին իրենց կողմը գրավելու եւ քրդերի դեմ օգտագործելու համար:

Չափազանց հետաքրքիր է քրդացած եւ արաբացած հայերի փոխհարաբերությունների հարցը, որի մասին նույնպես չկան տվյալներ, բայց կարելի է արձանագրել, որ Թուրքիայում դավանափոխ հայերի երկու խմբեր կամա, թե ակամա հայտնվել են հակադիր ճամբարներում:

Ինչպես պարզորոշ ցույց են տալիս փաստերը, ծպտյալ հայերի թեման ունի շատ ենթաշերտեր, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է յուրովի մոտեցում, եւ կարծում ենք՝ հետեւողական աշխատանքները լույս կսփռեն այս խնդրի վրա, որը մեզ համար ունի ոչ միայն քաղաքական, այլեւ բարոյական եւ հոգեբանական նշանակություն:

## **ՀԱՅ ՄՈՒՆԿԱՆՆԵՐ** **Հովհաննես Հովհաննիսյան**

Տեղեկատվական քաղաքակրթության օրեցօր հզորացող մամլիչի ներքո ազգային խնդիրն ինքնության պահպանության համատեքստում օրակարգային նշանակություն է ձեռք բերում: Հետաքրքիր են հատկապես ուսումնասիրություններն ինքնության պահպանությանը նպաստող գործոնների դասակարգման տեսանկյունից, որտեղ, երբ խոսվում է հայ տեսակի մասին, անշուշտ, նշվում են նաեւ կրոնի դերի մասին պատկերացումները: Այս առումով չենք ցանկանում քննարկել, թե հայ հանրության համար կրոնի որ ձեւն առավել նպաստավոր կլիներ ազգապահպանության տեսակետից: Կարծում ենք, որ խնդիրը տվյալ պարագայում առավել սուբյեկտիվ է՝ կապված ելակետերի նպատակային ընտրության հարցի հետ:

Ինչեւէ, ասվածի համատեքստում անդրադառնանք մի փոքր հայկական կրոնական խմբի, որի գոյության մասին որոշ հատվածական ուսումնասիրություններ կատարվել են միայն Միացյալ Նահանգներում: Խոսքը հայ մոլոկանների մասին է:

Առաջին հայացքից թվում է, թե Ռուս Ուղղափառ եկեղեցուց անջատված, ռուսական էթնիկ տարրին բնորոշ մոլոկանություն\* կոչվող հոսանքը որեւէ ընդհանրություն չի կարող ունենալ հայ ինքնության հիմնախնդիրների հետ: Սակայն փաստերն այլ բան են ասում:

---

\* Մոլոկանների հիմնադիրն է համարվում տամբովցի Սիմոն Ուկլեիցը: Աղանդի անվան ստուգաբանման հարցում գոյություն ունեն տարածայնություններ: Ոմանք «մոլոկան» անունը բխեցնում են Մոլոչնայա գետի անունից, երկրորդները համարում են, որ այդ անունը հերձվածը ստացել է պասի ժամանակ կաթ օգտագործելուց, հեղինակների երրորդ խումբը համարում է, որ անունն աղանդը ստացել է Աստվածաշնչում հիշատակված «հոգեւոր կաթից»:

1768թ. Սիմոն Ուկլեիցն իր «70 առաքյալներով» սկսեց աղանդի գործունեությունը, որը կարճ ժամանակում տարածվեց Սիբիրում, Կենտրոնական եւ Հարավային Ռուսաստանում, ինչպես նաեւ Անդրկովկասում: XIX դարի 30-40-ական թթ. մոլոկանությունը բաժանվել է տարբեր ճյուղերի՝ ուկլեիականներ /հին մոլոկաններ/, պրիգուն-մոլոկաններ եւ այլն: Հայաստանում մեծ է եղել պրիգունների քանակը, քանի որ հոսանքի հիմնադիր Մաքսիմ Ռուդոմյոտկինն ապրել է գործել է Հայաստանում:

Ցարական կայսրության կրոնական քաղաքականության արդյունքում 1800-ականների սկզբից մոլոկանները վերաբնակվեցին Կովկասում՝ կայսրության հարավային սահմանի երկայնքով հիմք դնելով ռուսական գաղթօջախների: Նույն շրջանում էլ նրանցից շատերը բնակություն հաստատեցին Կարսի մարզում: 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ցարական իշխանությունը ստվարացրեց Կարսի մարզում ռուսական տարբեր կրոնական խմբերի ներկայությունը, որոնցից էին մոլոկանները, դոկտորները, շաբաթականները /սուբոտնիկներ/, բապտիստները եւ այլն:

Կան փաստեր, որ այդ ժամանակ Կարսի շրջանի Կարա-կալա /նշանակում է «Սեւ ամրոց»/ գյուղում հայ մոլոկաններ են ապրել: Հստակ տեղեկություններ, թե երբ են հայերը բնակվել Կարա-կալայում կամ թե երբ են ռուսներն իրենց ռազմական հենակետը կառուցել այս գյուղում, չունենք: Ամենահավաստի տեղեկատվությունը տվել է ժամանակակիցներից Սիրական Կալոյանն իր «Շիրակի հայերի ներգաղթն ԱՄՆ» գրքում: Նա գրում է, որ Կարա-կալան 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հիմնադրված արդիական գյուղ է, գեղեցիկ շինություններով եւ լայն փողոցներով: Նախքան Կարա-կալա տեղափոխվելը հայերը բնակվելիս են եղել Գեգեաշխլարում /առավել հստակ արտասանությունը եւ տեղադրությունը հայտնի չեն/ եւ իրենց բողոքական հավատքի համար պարբերաբար հալածանքների են ենթարկվել համագյուղացիների կողմից: Այս մասին հետաքրքիր տեղեկություն է գրի առել Մ.Մուշեղյանը քահանա Փերունյանի պատմածներից՝ նշելով, որ այս գյուղի խուլիգանները հետապնդում, վիրավորում եւ հայիոյում էին բողոքականներին, պղծում նրանց դիակները՝ հանելով նորաթաղներին եւ ծառերից կախելով: Այդ պատճառով նրանք բողոք-նամակով դիմում են Նիկոլայ II-ին, որն էլ առաջարկում է նրանց տեղափոխվել ռուսական ռազմական հենակետի տարածք: Հարցի այդպիսի լուծման արդյունքում էլ հայ բողոքականները բնակություն են հաստատում Կարա-կալայում:

Ի դեպ, պահպանվել է բավական հեռվից արված մի լուսանկար, որտեղ գյուղացիները սեւ եւ սպիտակ շորերով կանգնած են իրենց բարաքների առջեւ: Տեսակետ կա, որ սպիտակ հագուստով մարդիկ հայ մոլոկաններն են, իսկ սեւ հագուստովը՝ այլազգի մոլոկանները: Այս լուսանկարն այսօր հանդիսանում է այն հիմքերից մեկը, որով գաղթած մոլոկանների սերունդները թուրքիա այցելության ընթացքում ցանկանում են ճշգրտել գյուղի տեղանքը: Բանն այն է, որ գյուղի տեղանքը բլրապատ տարածք է, եւ այդ բլուրներն էլ այսօր հիմնական կողմնորոշիչն են հանդիսանում, քանի որ Առաջին համաշխարհային պատերազմից հետո

գյուղում մնացած ազգաբնակչությունը վտարվեց, իսկ գյուղն ամբողջությամբ հավասարեցվեց հողին: Չնայած սրան, շրջակայքում բնակվող գյուղացիներն այսօր էլ պահպանում են հիշողությունն այն մասին, որ տվյալ տարածքում ոչ վաղ անցյալում գոյություն են ունեցել ռուսական ռազմական հենակետ եւ գյուղ: Այս առումով հետաքրքրական են հայ մոլոկանների սերունդներից Ջոյս Քեոսաբաբյան-Բիվինի՝ Թուրքիայում կատարած ուսումնասիրությունները, որտեղ նա, սեփական գերդաստանի արմատները գտնելու ճանապարհին, պարզել է, որ Կարսը Թուրքիային հանձնելուց հետո հայ մոլոկանների որոշ մասը, ինքնապահպանության մղումից ելնելով, թուրքացրել է ազգանունները:

Այս ամենից բացի, Կարա-կալայի հետ կապված են նաեւ մի շարք հետաքրքրական ավանդազրույցներ: Ըստ դրանցից մեկի՝ 1855թ. տասնմեկամյա մի երեխա տեսիլք է ունենում, որտեղ նրան հայտնվում է, որ թուրքերը կազմակերպելու են հայերի կոտորածներ, եւ դրանից խույս տալու համար հայերը պետք է արտագաղթեն այդ տարածքից: Չետագայում այդ մարգարեությունը կրկնվում է 1900թ., որից հետո հայ եւ ռուս մոլոկաններն արտագաղթում են Կարսի մարզից: «Մարգարե» տղայի անունը Դեմոս Շաքարյան էր, որի ընտանիքն սկզբնական շրջանում բնակություն է հաստատում Նյու Յորքում, հետո՝ Լոս Անջելեսում: Այստեղ էլ Շաքարյան ընտանիքն ԱՄՆ-ում հայ մոլոկանների մեջ դառնում է ամենահայտնին՝ իր կուտակած ֆինանսական կարողությունների եւ համախմբող դերի շնորհիվ: Ահա թուրքական ջարդերից խուսափելու այսպիսի մարգարեական դիպվածով են հայ մոլոկաններից շատերը բացատրում իրենց արտագաղթը Կարա-կալայից, չնայած որ մինչ օրս նրանք պախարակվում են հայերին սպառնացող վտանգից խույս տալու, մյուսներին չզգուշացնելու եւ հայրենակիցներին դավաճանելու համար:

1900-ականներին /հատկապես 1905-1912թթ. ընկած շրջանում/ մոտ 3000 ռուս եւ հայ մոլոկաններ, զինվորական ծառայությունից խուսափելու եւ աշխատանք գտնելու հույսով, արտագաղթեցին ԱՄՆ: Լոս Անջելեսի արեւելյան կողմում գտնվող «Ֆլեթս» թաղամասում, այլ մոլոկանների գյուղերի մոտակայքում, հայ մոլոկանները հիմք դրեցին իրենց եկեղեցուն՝ պահպանելով հայ ինքնությանը բնորոշ լեզվամշակութային տարրեր եւ մոլոկանության ծիսապաշտամունքը: Չետաքրքրական է, որ պատմական հիշողությունը նրանց մոտ թարմ է մնացել մինչ օրս, քանի որ նույնիսկ Լոս Անջելեսում բնակվելուց հետո նրանք իրենց բնակավայրը կոչում էին «Կարա-կալա» կամ «Կրիկ-կալա»:

1926թ. Կարսում եւ Արդահանում մնացած մոլոկաններից /հայ եւ ռուս/ շատերին Ռոստովի, «Սալսկի տափաստան» կոչվող վայրում ազատ

հողատարածք առաջարկվեց խորհրդային իշխանությունների կողմից, ինչի հետեւանքով էլ նրանց 90 տոկոսն /ինչպես նաեւ բոլոր ռուս դուխոբորները/ արտագաղթեց Ռուսաստան: Ռոստովի շրջանում մոլոկանները եւ դուխոբորները վերաբնակեցվեցին մոտ 34 գյուղերում, որոնցից շատերն անվանվեցին իրենց թողած բնակավայրերի անունով:

1930-ականներին Թուրքիայում սկսված ազգայնական շարժումը թուրքական անուններ պարտադրեց մոլոկանների երեք հիմնական գյուղերին. դրանք անվանվեցին Յալինչաիր, Աթչիլար եւ Չալկավուր: Խորհրդային իշխանություններն, իրենց հերթին, Թուրքիայում մնացած մոլոկանների մեծ մասին, շահագրգռելով հայրենիքում տներով ապահովելու ծրագրով, 1962թ. բնակեցրին Ստավրոպոլի շրջանում:

Պետք է նշել, որ ներկայումս մոլոկան հայերի կրոնական տրանսֆորմացիան դեռեւս շարունակվում է: Լոս Անջելեսի Ազուսա փողոցում գտնվող հավաքատեղիի հայ պրիգուն-մոլոկանները փոխել են իրենց ինքնությունը՝ դառնալով հայ պենտեկոստալներ կամ հիսունականներ: Չնայած իրենց պաշտամունքի մեջ նրանք պահպանում են մոլոկանությունից մնացած հիմնական ծիսապաշտամունքային տարրերը, այնուամենայնիվ, Մ.Ռուդոմյոտկինի աստվածաբանական գաղափարների շեշտադրումից անցում է կատարվել հիսունականության վարդապետական սկզբունքներին:

Ի դեպ, վերջին տարիներին մոլոկանությունից հիսունականության տրանսֆորմացված եկեղեցին իր անվան վրայից հեռացրել է «հայ» բառը, իրենց ձեւակերպմամբ՝ առավել ընկերային եւ գրավիչ մթնոլորտ ստեղծելու համար: Սակայն այս տրանսֆորմացիայի իրական պատճառները, թերեւս, այլ են, որոնց վերլուծությունն արդեն ուրիշ թեմա է:

## **ՀՈՒՆԳԱՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔ. ԱՆՑՅԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ**

Հունգարացի հայազետ **Բենեդեկ Ժիգմոնդն** արդեն 10 տարի զբաղվում է հայոց լեզվի, հայկական մշակույթի, բանահյուսության հարցերով: Նրա հետաքրքրության ոլորտում է գտնվում նաև հունգարահայ համայնքը՝ իր բազմաշերտ խնդիրներով: Բենեդեկը հայագիտություն է ուսումնասիրել Հունգարիայի պետական համալսարանում՝ հայտնի հայազետ, պրոֆեսոր Էդմոնդ Շյուլցի մոտ: Նա գլխավորում է իր իսկ հիմնած «Գիտակազմակերպչական ինստիտուտը», որն այլ խնդիրների շարքում զբաղվում է նաև հայագիտությամբ, ինչպես նաև հրատարակում է գրքեր եւ կազմակերպում դասընթացներ: Ինչպես տեղեկացանք հունգարացի հայազետից, որն, ի դեպ, լավ տիրապետում է ոչ միայն արդի արեւելահայերենին, այլև գրաբարին ու արեւմտահայերենին, Հունգարիայի որեւէ համալսարանում չկա հայագիտության ամբիոն, եւ երիտասարդ գիտնականի կարելոր նպատակներից է առաջիկայում հիմնել նման կենտրոն: Վերջերս Բենեդեկ Ժիգմոնդը հերթական անգամ այցելել էր Հայաստան, եւ մեր խնդրանքով զրուցեցինք հիմնականում հունգարահայ համայնքի մասին:

– Ե՞րբ են հայերն առաջին անգամ եկել Հունգարիա:

– Հայերի գաղթը Հունգարիա կարելի է բաժանել 4-5 փուլի: Առաջինը եղել է մոտավորապես 10-րդ դարում: Մեր ժամանակագիրները նշում են, որ հայերը հենց հունգարացիների հետ են եկել ներկայիս Հունգարիայի տարածք: Հայտնի է, որ հունգարացիները 9-րդ դարի վերջին եւ 10-րդի սկզբին Սեւ ծովի հյուսիսային ափերից եկել են Հունգարիա: Կան ուրիշ փաստեր, ապացույցներ եւս Հունգարիայում հայերի բավական վաղ հաստատվելու մասին: Կուզենայի հատկապես նշել հետեւյալը. մենք ունենք եկեղեցիներ, որոնք պետք է որ անպայման հայ ճարտարապետների ձեռքով կառուցված լինեն, որովհետեւ դրանք նման են Անի քաղաքի եկեղեցիներին եւ ունեն նույն ձևը: Ավելին, այդպիսի եկեղեցիներ աշխարհի ոչ մի այլ վայրում չեն հանդիպում: Բացի այդ, պահպանվել են փաստաթղթեր, որոնք վերաբերում են հունգարացի իշխանների, թագավորների կողմից հայերին հողեր, տարածքներ տրամադրելուն: Օրինակ՝ նախկին մայրաքաղաք Էստերգոմում 1240-ական թվականներին կար հայկական թաղամաս: Այս ամենը փաստում է, որ հայերի ներկայությունը շատ հին է: Մենք

ունենք նաև շատ բնակավայրեր, որոնց անվանումն արդեն ցույց է տալիս, որ այդտեղ հայեր են եղել: Հարկ է նշել, որ առաջին գաղթի ժամանակ եկած հայերից ոչ ոք այսօր որպես հայ չի պահպանվել: Նրանք ծուլվել են հունգարացիներին: Սակայն, օրինակ, կան մարդիկ, ովքեր հայտարարում են, թե այդ ժամանակ եկած հայերի սերունդներից են, բայց ես, ճիշտն ասած, չեմ կարող ասել, թե որքանով է դա արժանահավատ: Հայերի երկրորդ գաղթը տեղի է ունեցել 17-րդ դարի ընթացքում եւ տեւել է մոտավորապես մինչեւ 18-րդ դարի սկիզբը: Հայտնի է, որ 1672թ. Տրանսիլվանիայի իշխանը պաշտոնական թույլտվություն է տվել հայերի 3000 ընտանիքների, այսինքն՝ մոտ 10.000 հոգու բնակվել Տրանսիլվանիայում, հողեր ունենալ, առևտրական գործունեություն ծավալել: Այս հայերը եղել են անեցիների ժառանգներ, որոնք 1235թ. հեռանալով Անիից՝ հաստատվել են Ղրիմում, այնտեղ ձեւավորել եւ զարգացրել բարձր մակարդակի մշակույթ, ձեռագրերի դպրոց եւ այլն: Այնուհետեւ նրանց մի խումբ տեղափոխվել է Նոր Նախիջևան, մեկ այլ խումբ՝ Պոդոլիա եւ Լեհաստանի հարավ, իսկ մյուս մասը՝ Պոդոլիայից Մոլդովա եւ այնտեղից էլ Տրանսիլվանիա: Եվ, օրինակ, Տրանսիլվանիայի հայերի լեզուն շատ մոտ է Նոր Նախիջևանի հայերի լեզվին:

*– Իսկ Տրանսիլվանիայի հայերը ծուլվե՞լ են, թե՞ պահպանել են իրենց ազգային նկարագիրը:*

– Նրանք մինչեւ 19-րդ դարը պահպանում էին իրենց լեզուն՝ տրանսիլվանահայերենը, ավելին, ստեղծել են նաև գրական լեզու: 19-րդ դարում հատկապես Եվրոպայի զանազան վայրերում, որտեղ հայեր կային, մտավորականների կենտրոններում ստեղծվել էին գրական լեզուներ, որովհետեւ գրաբարն արդեն ոչ ոք կամ համարյա ոչ ոք չէր հասկանում: Արեւելյան Հայաստանում ձեւավորվել էր արեւելահայ գրական լեզուն, Արեւմտյան Հայաստանում եւ Ստամբուլում՝ արեւմտահայերենը, իսկ Տրանսիլվանիայում՝ տրանսիլվանահայերեն գրական լեզուն: Սակայն տարբեր կենտրոններում ստեղծված գրական լեզուները մեռան՝ իրենց տեղը զիջելով արեւելահայերենին եւ արեւմտահայերենին: Նույնը տեղի է ունեցել եւ տրանսիլվանահայերենի հետ, ու արդեն 19-րդ դարում այն դադարում է գրական լեզու լինելուց եւ օգտագործվելուց: Ավելին, այն կորցնում է նաև խոսակցական լեզվի իր դերը: Սակայն տրանսիլվանահայերը մինչեւ այսօր պահպանում են իրենց հայկական ինքնությունը, մշակույթը, կրոնը եւ հայ կաթոլիկ եկեղեցին: Կարելի է ասել՝ նրանք չեն ծուլվել: Սուրբ պատարագի լեզուն մինչեւ օրս մնում է հին հայերենը, բացի այդ, նրանք ունեն հատուկ՝ ֆոլկլորային-եկեղեցական երգեր տրանսիլվանահայերենով:

Մինչև օրս էլ կան մարդիկ, ովքեր կարող են երգել այդ երգերը: Ճիշտ է, իրենք արդեն չեն հասկանում, որովհետև լեզուն մոռացել են, բայց երգերը գիտեն, ինչպես նաև գիտեն, թե երբ պետք է դրանք երգել, ինչ ծիսակատարության, ինչ տոնի ժամանակ:

*– Բացի երգերից՝ ինչ-որ տեքստեր պահպանվե՞լ են այս լեզվով, արդյո՞ք այն ուսումնասիրված է:*

– Այո, ես ունեմ տեքստեր եւ ձայնագրել են երգեր այս լեզվով ու հիմա գրում են մի աշխատանք՝ նվիրված տրանսիլվանահայերենի քերականությանն ու բառապաշարին:

*– Լավ, իսկ ե՞րբ է եղել հայերի գաղթի երրորդ փուլը:*

Երրորդ խումբը 1915թ. ցեղասպանությունից փրկված եւ Յուդա-բաբելոնյան ապաստանած հայերն են: Նրանք այստեղ հիմնել են «Մասիս» ընկերությունը, որն էլ հրատարակել է մի ամսաթերթ՝ «Նոր դար»: Յայերի այս խումբը մնացել է Յուդաբաբելոնյան մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջը եւ կոմունիստական վարչակարգի հաստատումը, որից հետո նրանց մեծ մասը հեռացել է Յուդաբաբելոնյան չհարմարվելով վարչակարգին: Չորրորդ խումբը այն հայերն են, որոնք Խորհրդային Միության տարիներին եկել են Յուդաբաբելոնյան աշխատելու ու մնացել են: Յինգերորդ խումբը Խորհրդային Միության փլուզումից հետո եկած հայաստանցի հայերն են: Նրանց հոսքը շարունակվում է մինչև այսօր՝ պայմանավորված Յայաստանի տնտեսական վիճակով:

*– Ինչպիսի՞ն է հունգարահայերի հայերենի իմացության մակարդակը, նոր սերունդը սովորո՞ւմ է հայերեն, արդյո՞ք կա՞ն դպրոցներ, թեկուզ կիրակնօրյա:*

– Ցավոք, մինչև օրս հայկական դպրոց չկա, եւ մենք աշխատում ենք դպրոց հիմնել: Յայ Առաքելական եկեղեցին Յուդաբաբելոնյան ներկայացուցիչ է ունեցել միայն 2003թ., եւ այդ հոգեւոր հովիվը ստեղծել էր կիրակնօրյա դպրոց, որը, ցավոք, հիմա չի գործում: Այդ հոգեւորականը միեւնույն ժամանակ Չեխիայի Յայ Առաքելական եկեղեցու սպասավորն էր: Կարճ ժամանակ անց, նաև տնտեսական պայմաններից ելնելով, նա տեղափոխվեց Չեխիա: Յուդաբաբելոնյան եկեղեցուն ֆինանսապես աջակցող մարդիկ հայտարարեցին, որ այլևս ի վիճակի չեն օգնել, եւ ներկայումս Յուդաբաբելոնյան հայերը, որոնք առաքելական եկեղեցու հետեւորդներ են, չունեն հոգեւոր հովիվ: Բայց, օրինակ, տեղական ինքնակառավարման մարմինները կազմակերպում են հայերենի

դասընթացներ, որոնց, սակայն, մասնակցում են սահմանափակ թվով հայ երեխաներ, հիմնականում՝ տրանսիլվանահայեր: Իսկ Հայաստանից նոր եկածների զավակներն իրենց ծնողներից են սովորում հայերեն, եւ վերջիններս ձգտում են, որ իրենց զավակները լավ խոսեն հայերեն: Ցավոք, այդ հայերը եւս ավելի լավ խոսում են հունգարերեն, ու դա հասկանալի է, քանի որ նրանք հաճախում են հունգարական մանկապարտեզ, դպրոց, առօրյայում, կենցաղում օգտագործում են առավելապես հունգարերենը:

*– Եկեղեցիների մասին ի՞նչ կասեք:*

– Հայտնի է, որ Հունգարիա գաղթած հայերը /2-րդ խումբը/ 17-րդ դարի վերջին կաթոլիկություն ընդունեցին, նրանք արդեն կառուցել են եկեղեցիներ արեւմտյան ոճով, սակայն ոչ մի լուրջ փոփոխություն չի եղել, միայն իրավական ենթակայությունը կաթոլիկ եկեղեցունն է: Բացի այդ, կաթոլիկ հայերը Մխիթարյան միաբանության հայրերի միջոցով միշտ կարողացել են քահանա ունենալ, որը շատ կարեւոր հանգամանք է: Հայ կաթոլիկ եկեղեցին մեծ դեր է կատարել հայկական ինքնության պահպանման համար: Տրանսիլվանիայում կան 4 հայկական եկեղեցիներ, որոնք ունեն բավական հարուստ գրադարաններ, եւ հայ գրականության ու մշակույթի վերաբերյալ գրքերի տարածման գործում մեծ դեր են կատարել: Այդ եկեղեցիների շուրջ ստեղծվել են որոշ դպրոցներ, երգչախմբեր: 1920թ. Տրանսիլվանիայի հայերի մի մասը տեղափոխվել է արդի փոքր Հունգարիայի տարածք, այսինքն՝ Բուդապեշտ եւ այլ քաղաքներ: Բուդապեշտում կառուցվել է հայ կաթոլիկ եկեղեցի, որը մինչեւ այսօր ծառայում է որպես հայերի հանդիպատեղի ոչ միայն կիրակնօրյա պատարագներին, այլեւ այլ օրերի, օրինակ՝ ցեղասպանության հիշատակի օրը:

*– Իսկ կաթոլիկ եկեղեցու հետեւորդ հայեր՞ն են մեծ թիվ կազմում, թե՞ առաքելական:*

– Միանշանակ՝ կաթոլիկ:

*– Ինչպե՞ս են կաթոլիկ եւ առաքելական հայերի փոխհարաբերությունները:*

– Շատ լավ, եւ ասեմ, որ, օրինակ, երբ առաքելական եկեղեցին դեռ չկար, առաքելական հայերն այցելում էին հայ կաթոլիկների եկեղեցի:

*– Իսկ ինչպիսի՞ն են Հունգարիայի հայերի բոլոր խմբերի՝ տրանսիլվանահայերի, հայաստանցի հայերի եւ մյուսների հարաբերությունները:*

– Սփյուռքահայերի շրջանում կան, այսպես կոչված, դասական գործոններ՝ եկեղեցին, լեզուն, հին հայրենիքը եւ այլն: Հինք ընդունելով այս բաժանումները, իհարկե, հունգարահայերի մեջ խմբավորումներ կան: Բայց Հունգարիայի հայերի խմբավորման եւ հարաբերությունների համար ուրիշ գործոններ կան, որոնք շատ ավելի հզոր են: Եվ դրանք հաստատ լեզվի կամ եկեղեցական պատկանելության գործոնները չեն, այլ այն, թե ով ում հետ կապված ինչ շահեր ունի: Կան որոշակի կազմակերպություններ, որոնք կոչվում են մշակութային ընկերություններ, բայց իրականում գործում են որպես կուսակցություններ: Հունգարիայում փոքրամասնությունները կարող են ընտրել իրենց ինքնակառավարման մարմինները, եւ այդ ընտրությունների ժամանակ էլ հենց բախվում են շահերը:

*– Հունգարահայ համայնքն արդյո՞ք ունի ներփակ բնույթ, կա՞, օրինակ, ներքին ամուսնությունների ավանդույթ:*

– Մինչեւ 20-րդ դարի սկիզբը հայերը գերազանցապես իրար հետ էին ամուսնանում: Սակայն 1920թ. հետո, երբ տրանսիլվանահայերի մի մասը տեղափոխվեց Բուդապեշտ, հայերի ներքին ամուսնությունների ավանդույթը փոփոխության ենթարկվեց: Բուդապեշտը 2 միլիոնանոց քաղաք է, եւ առանձին հայկական թաղամաս չկա, իսկ Տրանսիլվանիայում հայերն ունեին իրենց քաղաքները, գյուղերը, թաղամասերը, ինչը բավական կարեւոր էր: Հայերն ամփոփ չէին ապրում Բուդապեշտում, եւ սա, բնականաբար, նվազեցնում էր հանդիպումների, շփումների թիվը: Կարելի է ասել, որ այն ժամանակվանից սկսած, երբ տրանսիլվանահայերը տեղափոխվեցին արդի Հունգարիա, խախտվեց ներքին ամուսնությունների ավանդույթը, սկսվեցին խառնամուսնություններ, ձուլում, եւ հիմա հազվադեպ է պատահում, որ հայն ամուսնանա հայի հետ: Իսկ նոր եկածների մեջ կան մարդիկ, ովքեր եկել են Հունգարիա հենց ամուսնության պատճառով, այսինքն՝ ամուսնացել են հունգարացու հետ ու եկել:

*– Կարո՞ղ ենք ասել, որ Հունգարիայում միասնական հայ համայնք, որպես այդպիսին, չկա:*

– Մինչեւ վերջին տարիները հունգարահայերը բոլորը միասին են հիշել Հայոց ցեղասպանության օրը, սակայն այս տարի առաջին անգամ է, որ նրանք առանձին նշեցին: Ուրեմն, եթե տրանսիլվանահայերը, հայաստանցի հայերը, լիբանանահայերը, իրաքահայերը բոլորը միասին են հիշում ցեղասպանությունը, եւ կարծում են, որ կարելի է ասել՝ հայ համայնք կա:

– Իսկ ինչո՞ւ այս տարի ցեղասպանության օրը միասին չեն նշել, արդյո՞ք դա ուներ տեխնիկական պատճառ:

– Ոչ, դա ուներ զուտ քաղաքական, կուսակցական պատճառ:

– Հունգարիայի հայության թվաքանակի մասին կարո՞ղ եք ինչ-որ բան ասել:

– Դժվար է հստակ պատասխանել, որովհետեւ ոչ մի փաստ չկա որեւէ արժանահավատ եզրակացության համար, բայց կարող ենք ասել, որ մոտավորապես 15.000 մարդ հայկական ծագում ունեն: Վստահաբար կարելի է ասել, որ 1000 տրանսիլվանահայ կա, որոնք միշտ գալիս են համայնքային, եկեղեցական միջոցառումների, եւս 200-300 մարդ էլ՝ Հայաստանից կամ Խորհրդային Միության նախկին հանրապետություններից:

– Ո՞րն է Հունգարիայում հայերի հիմնական զբաղմունքը, կա՞ն ռիորտներ, որտեղ ավելի շատ հայերն են ներկայացված:

– Տրանսիլվանահայերը զբաղվել են ավանդական հայկական զբաղմունքներով, այսինքն՝ առեւտրականներ էին, բժիշկներ, փաստաբաններ: Հունգարիայի Խորհրդարանում 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին եղել է 15 հայ պատգամավոր: Հայերը շատ մեծ դեր են խաղացել Հունգարիայի քաղաքական կյանքում եւ հունգարական հեղափոխության մեջ, ինչպես նաեւ ազատագրական պայքարում /19-րդ դարի առաջին կես/: Հայերը զգալի թիվ են կազմել նաեւ սպայական անձնակազմում եւ զինվորական ղեկավարության մեջ: Նշեն նաեւ, որ նահատակ հերոսների մեջ նույնպես հայեր կան: Իսկ ներկայումս հունգարահայերը առեւտրով են զբաղվում, կան բժիշկներ, երաժիշտներ: Դժվար է ասել, թե ինչով են զբաղվում, սակայն շեշտեն, որ, օրինակ, ամեն երգչախմբի մեջ առնվազն երկու տրանսիլվանահայ կա, եւ սա, կարելի է ասել, օրինաչափություն է: Իմ կարծիքով՝ ամենակարեւորն այն է, որ Հունգարիայի հայերի գերակշիռ մասը մտավորականներ են:

Զրույցը վարեց  
**Ռուբեն Մելքոնյանը**

**ՀԱՍԱՇԽԱՐՅԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ  
ՍՑԵՆԱՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ  
Գազիկ Տեր-Հարությունյան**

Ինչպես հայտնի է, ամերիկյան Կոնգրեսն օրինագիծ է մշակել 2008թ. Պեկինի օլիմպիական խաղերը բոյկոտելու վերաբերյալ՝ հիմնավորելով, որ Չինաստանում խախտվում են ժողովրդավարական նորմերը եւ մարդու իրավունքները: Ի պատասխան՝ չինացիները զգուշացրել են, թե վաճառքի կհանեն իրենց ունեցած \$1.33 տրլն ԱՄՆ պետական փոխառությունները, ինչը կհանգեցնի դոլարի փլուզմանը<sup>1</sup>: Հարկ է հատուկ շեշտել, որ սա առաջին միջադեպն է, երբ ոչ թե Միացյալ Նահանգներն է սպառնում, այլ հենց Միացյալ Նահանգներին են սպառնում տնտեսական պատժամիջոցներով:

«Չինական» միջադեպը, դոլարի արժեզրկման ներկայիս միտումները /բավական է նշել, որ համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի գնահատականների՝ դոլարի արժեքը գերազնահատված է 15-35%/, ամերիկյան արտաքին պարտքի /\$9.0 տրլն, ինչը կազմում է ԱՄՆ ՀՆԱ 65,5%/ շարունակական աճը եւ ամերիկյան անշարժ գույքի շուկայում ծագած ճգնաժամային երեւոյթները դոլարի ապագայի վերաբերյալ տարաբնույթ կարծիքների եւ փորձագիտական գնահատականների ի հայտ գալու առիթ հանդիսացան:

Ամերիկյան արժույթի ապագայի խնդիրներն արծարծվում են Բրետոն-Վուդյան ֆինանսական համակարգի ձեւավորման օրից /1944թ./,

---

<sup>1</sup> Այս գործընթացը բնորոշ է Նոր սառը պատերազմի տրամաբանությանը եւ հիշեցնում է Արեւմուտքի կողմից 1980թ. մոսկովյան օլիմպիադայի բոյկոտումը: Սակայն տարբերությունն այն է, որ նախկինում ողջ «Ազատ աշխարհն» աջակցեց ԱՄՆ-ին, եւ այդ սպորտային միջոցառումը Մոսկվայում, իրոք, որոշ իմաստով թերարժեք էր: Սակայն այսօր, հաշվի առնելով ՉԺՀ տնտեսական հակազդեցության ռեսուրսները եւ Արեւմուտքում համերաշխության բացակայությունը /արեւմտյան ընկերությունները բավական խոշոր պատվերներ են ստացել պեկինյան օլիմպիադայի կապակցությամբ, եւ ամերիկյան նման նախաձեռնությունը կարող է միայն լրացուցիչ հակաամերիկյան տրամադրություններ առաջացնել/, պետք է կարծել, թե Վաշինգտոնը կսահմանափակվի հոգեբանական ճնշումներով եւ իրական քայլերի չի դիմի:

երբ ապագա ՄԱԿ-ի մի շարք անդամներ, մասնավորապես, համաձայնության եկան ամերիկյան դոլարը որպես բազային արտարժույթ ընդունելու վերաբերյալ: Դոլարի շուրջ քննարկումներն աշխուժացան հատկապես 1971թ. ֆինանսական-էներգետիկ ճգնաժամից հետո, երբ Միացյալ Նահանգների նախագահի հրամանագրով դադարեցվեց ամերիկյան արժույթի փոխանակումը ոսկու հետ: Համարվում է, որ այդ պահից սկսած՝ դոլարի էմիսիայի մեծաշնորհ ունեցող ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը դարձավ երկրագնդի ամենաշահութաբեր ձեռնարկությունը, քանի որ 100 դոլարանոցի արտադրման ինքնարժեքը կազմում է ընդամենը 3 ցենտ:

Նախկինում գոյություն ունեցող ֆինանսական համակարգի վերաբերյալ հոռետեսական սցենարների հեղինակները հիմնականում եվրոպական եւ ռուսաստանյան փորձագետներն են /եմանուել Տոդ, Միխայիլ Դելյագին եւ այլք/: Ներկայումս ման մոտեցումներ ունեն մատե ամերիկացիները. վերջերս Միացյալ Նահանգների ֆինանսական գլխավոր տեսուչ Դեւիդ Վոքերը, անշարժ գույքի շուկայում առաջացած հիմնախնդիրների կապակցությամբ, տազնապալի կանխատեսումներ կատարեց ամերիկյան տնտեսության վերաբերյալ եւ իր երկիրը համեմատեց անկման դարաշրջանի Հռոմեական կայսրության հետ:

Այս ամենի առիթով, առանց մանրամասնելու առկա բազմաթիվ իրատեսական եւ կոնսպիրոլոգիական վարկածները, փաստենք, որ չնայած անբարենպաստ զարգացումներին եւ դրանց մեկնաբանություններին, ԱՄՆ-ը շարունակում է մնալ ամենահզոր տերությունը: Նրա տնտեսության հզորությունը կազմված է երկու հիմնական բաղադրիչներից. գիտատեխնոլոգիական բարձրակարգ համակարգից եւ դրա ածանցյալ, առայժմ անգերազանցելի ռազմարդյունաբերական համալիրից ու այդ ոլորտները սնող ֆինանսական էֆեկտիվ համակարգից: Վերջինիս արդյունավետությունն էապես պայմանավորված է օտարերկրյա խոշոր ներդրումներով /դրանց չափը, համաձայն ԱՄՆ գանձապետարանի տվյալների, հասնում է տարեկան մոտ \$0.9 տրլն-ի/ եւ վերը նշված այն հանգամանքով, որ Դաշնային պահուստային համակարգը կարող է «բաց թողնել» անհրաժեշտ քանակությամբ թղթադրամ:

Սակայն որեւէ տերության երկարատեւ առաջատար լինելը դեռեւս երաշխիք չէ, թե այդ կարգավիճակը հավերժ է տեւելու, եւ դա առաջին հերթին ըմբռնում է Միացյալ Նահանգների ընտրանին. մասնագիտական գրականությունում կարելի է հանդիպել ամերիկյան «ուղեղային կենտրոններում» մշակված «կայսրության մահանջի» ամենատարբեր սցենարների:

Վերոնշյալի համատեքստում նկատենք, որ ամերիկյան դոլարի հետ կապված զարգացումները նույնքան կարելու է նաև միայն ԱՄՆ-ի, այլև մնացյալ աշխարհի, այդ թվում նաև նրա գործընկերների համար: Մասնավորապես, գրեթե բոլոր երկրների արժույթային պաշարների մի զգալի մասը դոլարով է, եւ փորձագետները համոզված են, որ ԱՄՆ-ի կողմից դեֆոլտ հայտարարելը ծանր հետեւանքներ կունենա եւ կհանգեցնի համաշխարհային տնտեսական ու քաղաքական, այսինքն՝ համակարգային ճգնաժամի: Ստեղծված իրադրությունում պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ոչ միայն այլ երկրներն են տնտեսապես կախված Միացյալ Նահանգներից, այլև վերջինս նույնպես յուրօրինակ «պատանդ» է այն երկրների ձեռքին, որոնք կարող են դեֆոլտի հասցնել գերտերությանը՝ անկախ նրա կամքից /ինչպես դատեսնում ենք Չինաստանի պարագայում/: Հատկանշական է, որ նման իրավիճակը կարծես թե տնտեսական կայունության երաշխիքներ է պարունակում. ԱՄՆ-ը եւ այլ երկրներ ուղղակի պարտադրված են համագործակցել, որպեսզի խուսափեն համընդհանուր համակարգային ճգնաժամից:

Սակայն որոշ փորձագետներ գտնում են, որ այդ տնտեսական կայունությունը փխրուն է, եւ կան օբյեկտիվ նախադրյալներ, որոնք կարող են խախտել ներկայիս հավասարակշռությունը: Մասնավորապես, վերլուծաբաններ Ս.Գրինյանը եւ Ա.Ֆոմինը ելնում են այն թեզից, որ ամերիկյան արժույթի համեմատական կայունությունը պայմանավորված է ԱՄՆ ռազմական հզորությամբ /հիշենք, որ ԱՄՆ պաշտոնական ռազմական ծախսերը տարեկան կազմում են համաշխարհային մոտ 50%-ը/ եւ որ ի տարբերություն այլ երկրների՝ ամերիկյան զինված ուժերի հիմնական նպատակը ոչ թե սեփական երկրի, այլ այն աշխարհակարգի պաշտպանությունն է, որում շրջանառվում է դոլարը: Համարվում է նաև, որ նման իրավիճակը կարող է ապահովել համաշխարհային տնտեսական կայունությունն այնքան ժամանակ, քանի դեռ օտարերկրյա ներդրումներն ամերիկյան տնտեսությունում գերազանցում են վերջինիս ռազմական ծախսերը:

Ըստ վերոնշյալ վերլուծաբանների՝ զարգացումների հոռետեսական սցենարի դեպքում ռազմական ծախսերը կգերազանցեն օտարերկրյա ներդրումների չափն արդեն 2010-2011թթ., իսկ լավատեսական սցենարում՝ 2020-2025թթ.: Այսինքն, եթե ներկայիս միտումները պահպանվեն, ապա համակարգային ճգնաժամը կարող է սկսվել արդեն 3-4 տարի, իսկ լավագույն դեպքում՝ մոտ 15 տարի հետո:

Ավելացնենք, որ այս պարագայում նույնպես հնարավոր են տարբեր

սցենարներ: Ակնհայտ է, որ ԱՄՆ ղեկավարությունը եւ այլ առաջատար տերություններ որոշակի միջոցներ են ձեռնարկելու նման զարգացումներից խուսափելու նպատակով: Դրանցից մի քանիսին մենք արդեն ականատես ենք՝ դոլարի արժեզրկում, էներգակիրների գնի աճ եւ այլն: Չի կարելի նաեւ բացառել, որ առաջատար տերությունները ԱՄՆ-ի հետ մեկտեղ ձեւավորեն նոր տիպի համաշխարհային ֆինանսական համակարգ, ինչպես դա տեղի ունեցավ Բրետոն-Վուդում 1944թ.:

Չի կարելի բացառել, սակայն, նաեւ «վատ» զարգացումների հնարավորությունը: Նախկինի համեմատ՝ Նոր սառը պատերազմի հիմնական տարբերություններից մեկն է «զսպման» միջազգային մեխանիզմների բացակայությունը, եւ դա առաջին հերթին վերաբերում է միջուկային զենքի անվերահսկելի տարածմանը: Այսինքն՝ ռազմաքաղաքական որոշ գործընթացներ Մերձավոր եւ Միջին Արեւելքում, Կենտրոնական Ասիայում, Մերձկասպյան եւ Հարակովկասյան տարածաշրջաններում կարող են հանգեցնել անվերահսկելի զարգացումների, որոնց պարագայում ե՛ւ ԱՄՆ-ը, ե՛ւ նրա ընդդիմադիրները՝ ի դեմս հատկապես Չինաստանի եւ Ռուսաստանի, կարող են գործել առանց «խաղի կանոնների». այսինքն՝ երկուստեք գործի կղրվեն բոլոր, այդ թվում նաեւ տնտեսական պատերազմի ռեսուրսները, եւ այդ պարագայում խոսել արտարժույթի շուրջ «համագործակցության» մասին՝ լուրջ չի լինի:

**ՌՈՒՄԱՍՏԱՆՅԱՆ ՎԵՐՋԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԸ  
Դավիթ Հովհաննիսյան**

Միխայիլ Ֆրադկովի կառավարությունը պաշտոնաթող եղավ: Սովորաբար երկրի վարչապետին իր պարտականությունների կատարումից ազատում են այն դեպքում, երբ երկրում կուտակվում են չլուծված տնտեսական եւ սոցիալական պրոբլեմներ, ընդդիմությունը գլուխ է բարձրացնում, պետության նախագահի վարկանիշը կտրուկ ընկնում է եւ այլն:

Դատելով ռուսաստանյան վիճակագրության թվերից՝ այստեղ վիճակը ճիշտ հակառակն է՝ տնտեսությունը զարգանում է, իրականացվում են լուրջ մեծածավալ եւ թանկարժեք սոցիալական ծրագրեր, նախագահ Պուտինի վարկանիշը չափազանց բարձր է, ընդդիմությունը գրեթե անկայել է:

Ե՛վ արեւմտյան, ե՛ւ ռուսաստանյան վերլուծաբանները միասնական են իրենց կարծիքներում. այս քայլը կապված է առաջիկա նախագահական ընտրությունների, ավելի ճիշտ՝ այն խնդրի հետ, թե, վերջապես, ով է փոխարինելու նախագահ Պուտինին իր պաշտոնում:

Մ.Ֆրադկովը, որին շատ դիպուկ անվանել էին «տեխնիկական վարչապետ», զբաղեցնում էր մի պաշտոն, որին տիրելը հաջողության հասնելու լուրջ հնարավորություններ է տալիս նախագահի աթոռի համար պայքարում: Սակայն սեփական քաղաքական հավակնություններ չունեցող վարչապետն այս պարագայում ոչ միայն «իզուր տեղը» զբաղեցնում էր այս կարեւոր դիրքը, որին հասանելի են բազմաթիվ ազդեցության լծակներ, այլ նաեւ դառնում էր քաղաքական անկայունության գործոն՝ սադրելով իր ենթակայության տակ գտնվող, սակայն նախագահական հավակնություններ ունեցող բարձրաստիճան պաշտոնյաներին՝ պայքարել այդ լծակներին տիրելու համար: Այս վերջին հանգամանքը ոչ միայն քայքայում է կառավարության աշխատանքը, խոչընդոտում վերջինիս գործունեությունը, այլեւ սրում է ներքաղաքական, այս դեպքում՝ ներապարատային պայքարը:

Այս ամենին ավելացավ նախագահ Պուտինի դժգոհությունն իր մերձավորներից մեկի՝ հզոր պետական «Ռոսօբորոնէքսպորտ» կորպորացիայի ղեկավար Սերգեյ Չեմեզովի՝ «Ռոստեխնոլոգիի» պետական

կորպորացիա ստեղծելու նախագծի հանդեպ վարչապետ Ֆրադկովի բացասական կեցվածքից:

Սպասվում էր, որ վարչապետի պաշտոնը կստանձնի փոխվարչապետ Սերգեյ Իվանովը, ինչը, փաստորեն, կնշանակեր, որ Վ.Պուտինը հայտարարում է այն մարդու անունը, որը փոխարինելու է իրեն պետության ղեկավարի պաշտոնում: Սակայն այստեղ ռուսական պետականության բյուզանդական ավանդույթները նորից իրենց մասին բարձրաձայնեցին. Վ.Պուտինն այս պաշտոնում հաստատելու համար Պետական դումային առաջարկեց մի չինովնիկի անուն, որը շատ քչերն էին լսել եւ որն ավելի շատ հայտնի էր որպես պաշտպանության նախարար Անատոլի Սերդյուկովի աներ:

Վիկտոր Ջուբկովը 1992թ. աշխատել է Վ.Պուտինի հետ որպես վերջինիս տեղակալ Սանկտ Պետերբուրգի քաղաքապետարանում ընդհանուր սոբչակյան թիմի մեջ: 66 տարեկան է, ինչը որոշակի տեսանկյունից լուրջ առավելություն է: Նրա անունը վերջին շրջանում մի քանի անգամ շոշափվել է շնորհիվ այն հանգամանքի, որ Ջուբկովի ղեկավարած կազմակերպության ջանքերի շնորհիվ Ռուսաստանի անունը հանվել է ՖԱՏՖ-ի /փողերի լվացման դեմ պայքարող միջազգային կազմակերպություն/ «սեւ ցուցակից», որից հետո այս երկիրը դարձել է ՖԱՏՖ-ի անդամ:

Այս նշանակման կապակցությամբ արդեն իսկ առկա են բազմաթիվ վարկածներ, որոնց ելակետային ընդհանուր դրույթն այն է, որ Վ.Պուտինը փորձում է այնպիսի քայլեր կատարել, որոնք կերաշխավորեն իշխանությունն իր ձեռքում պահելուն: Թե ինչպիսին կլինեն նրա հետագա քայլերն այս ուղղությամբ, մեկնաբանները ոչ միայն տարակարծիք են, այլ նաեւ դրսեւորում են գերազանց երեւակայություն:

Սակայն այս ամենն իրականում հետաքրքիր չէր լինի, եթե չլիներ մի չափազանց սկզբունքային հիմնախնդիր: Նմանօրինակ վարքագիծը ցույց է տալիս, որ Ռուսաստանում գործող վարչահամակարգը չափազանց փխրուն է, դիրքերը՝ անկայուն, միջոցների եւ ռեսուրսների բաժանման գործընթացը չի ավարտվել, ինչը ստեղծում է հերթական վերաբաժանման իրական վտանգ, որն էլ հղի է քաղաքական անկայունությամբ եւ ցնցումներով:

Մյուս կողմից՝ արտաքուստ միաձույլ թվացող կրենյան ներկայիս թիմը, հավանաբար, իրականում այդքան էլ համախմբված չէ իր առաջնորդի շուրջ: Սա բնական է, քանի որ նախագահի պաշտոնը զբաղեցնելու բոլոր ռեալ հավակնորդներն այդ թիմի անդամներ են, ինչը

նշանակում է, որ պայքարը ծավալվում է «պուտինականների» միջև: Ներկայումս թեկնածուների պայքարը ապարատային, ինտրիգային բնույթ է կրում, ինչը ենթադրում է կողմնակիցների որոնում, սեփական թիմերի ստեղծում, նոր կապերի հաստատում:

Բացի այն, որ հիմնական հավակնորդների ուղղությամբ ստիպված են կողմնորոշվել պուտինյան թիմի մյուս բարձրաստիճան անդամները, սեփական ապագայի վերաբերյալ մտահոգություններն անհրաժեշտաբար այս ներքին պայքարի ելեւէջների մեջ ներգրավում են նաև երկրի ֆինանսատնտեսական սերուցքը: Իսկ Ռուսաստանի դեպքում, երբ գրեթե բոլոր խոշոր եկամտաբերություն ունեցող ոլորտներում հիմնական դերակատարները պետական կորպորացիաներն են, նման վարքագիծը նույնպես նպաստում է անկայունությանը:

Այս պարագաներում նախագահ Պուտինը, որը եռանդուն եւ հաջողակ քաղաքական գործիչ է եւ, հավանաբար, ավարտված չի համարում իր քաղաքական կարիերան, ստիպված է այնպիսի քայլեր կատարել, որոնք կապահովեն իր թե՛ քաղաքական եւ թե՛ ֆինանսական ապագան:

\* \* \*

Այսպիսով, պուտինյան նախագահական երկրորդ ժամանակաշրջանը, մոտենալով ավարտին, դեռեւս խուսափում է պատասխան տալ ռուսաստանյան ամենակարեւոր եւ մշտական ինտրիգ պարունակող հարցին. «Ո՞վ է հաջորդ թագավորը»:

Արդեն երկու տարի է, ինչ կրեմլիւզները /սովետոլոգին փոխարինման եկած Ռուսաստանի հարցերի ուսումնասիրությամբ զբաղվող արեւմտյան մասնագետների նոր անվանումն է/ տարբեր վարկածներ են առաջարկում, քննարկում այս կամ այն թեկնածուի քաղաքական քաշի, անձնական որակների, հակումների եւ կապերի հետ առնչվող խնդիրները: Բնականաբար, այս հարցին շատ ավելի շահագրգիռ եւ կասկածամիտ մոտեցում են ցուցաբերում ռուսաստանյան մեկնաբանները: Այս ամբողջ լրատվա-վերլուծաբանական աղմուկն ուղղորդում է մի չափազանց կարեւոր գործողություն, որը դեռ Վ.Պուտինին նախագահի պաշտոնին հասցնելու ժամանակ ստացավ «Ժառանգորդ» անվանումը:

Կարեւորագույն հարցն այստեղ կապված է, մեր տեսանկյունից, ոչ թե կոնկրետ թեկնածուի անվան, այլ այն հիմնահարցի հետ, որ ռուսաստանյան հասարակությունը, որդեգրելով «ժողովրդավարություն» միֆին հատուկ արեւմտյան ծեսերը՝ սահմանադրություն, ընտրական օրենսգիրք, նախընտրական պայքար, իմիջնեյքություն, պիարային

տեխնոլոգիաների կիրառում, հանդիպումներ ընտրողների հետ, վերջապես՝ ընտրություններ, այնուամենայնիվ, իշխանության հանձնման հետ կապված խնդիրները լուծում է իր արժեքային համակարգին, քաղաքական ավանդույթներին ու մտածելակերպին համապատասխան:

Հարկ է նշել, որ Բ.Ելցինի կիրառած տեխնոլոգիան լուրջ առաջընթաց է նախորդ ժամանակաշրջանի համեմատ, երբ իշխանությունը բոլոր հնարավոր եւ անհնար միջոցներով պահվում էր, իսկ պետության առաջին դեմքի փոփոխությունը կատարվում էր միայն վերջինիս մահվան /Ի.Վ.Ստալին, Լ.Ի.Բրեժնեւ եւ այլք/ կամ էլ հեղաշրջման /Ն.Ս.Խրուշչով, Մ.Ս.Գորբաչով/ հետեւանքով:

Ա.Թոյնբին, խոսելով Ռուսաստան–Արեւմուտք հարաբերությունների մասին, մի կարելու դիտարկում է կատարում: Նա գրում է. «Համարյա հազար տարի ռուսները պատկանել են ոչ թե Արեւմտյան քաղաքակրթությանը, այլ Բյուզանդականին՝ նույն հունահռոմեական ծագման քույր հասարակությանը, սակայն բոլորովին այլ քաղաքակրթությանը: Բյուզանդական ընտանիքի ռուս անդամները միշտ կտրուկ կերպով դիմադրել են Արեւմտյան աշխարհի ազդեցության տակ ընկնելու ցանկացած սպառնալիքին եւ շարունակում են դիմադրել մինչ օրս: Որպեսզի իրենց ապահով զգան Արեւմուտքի կողմից նվաճվելուց եւ բռնի ուժացումից, նրանք անընդհատ իրենց ստիպում են յուրացնել արեւմտյան տեխնոլոգիաների նվաճումները: Այդ tour de force-ը առնվազն երկու անգամ իրականացվել է ռուսական պատմության ընթացքում. առաջին անգամ՝ Պետրոս Մեծի եւ երկրորդ անգամ՝ բոլշեւիկների կողմից»:

Սակայն արեւմտյան տեխնոլոգիաները, ընդ որում՝ ոչ միայն գիտատեխնիկական, ռազմական, արդյունաբերական, գյուղատնտեսական բնույթի, այլ նաեւ տնտեսական, սոցիալական, քաղաքական, շարունակում են զարգանալ, եւ Ռուսաստանը նորից հայտնվում է նույն խնդրի առջեւ:

«Բնականաբար,– գրում է Ա.Թոյնբին,– ճակատագրական հարց է ծագում. արդյո՞ք կարող է որեւէ մեկը փոխառել օտար քաղաքակրթությունը մասնակիորեն՝ վտանգված չլինելով աստիճանաբար ներգրավվել վերջինիս յուրացման մեջ լիովին եւ ամբողջականորեն»:

Մեր տեսակետից, Ռուսաստանը՝ սկսած մոնղոլ-թաթարների տիրակալության դարաշրջանից, մշակել է հստակ ադապտացիոն մեխանիզմ, որը թույլ է տալիս նրան փոխառման գործառույթներ կատարել առանց սեփական ինքնության կործանման սպառնալիքի: Այդ բանաձեւը, համաձայն Մ.Բախտինի, այսպես է հնչում. «Յուրացնել

ուրիշինը՝ առանց սեփականը դարձնելու»: Սա նշանակում է, որ այն ամենը, ինչը վտանգում է այդ ինքնության հենքը, այսինքն՝ հիմնարար արժեքները, ոչ մի դեպքում չի կարելի փորձարկել սեփական մշակութային համակարգում, իսկ եթե նույնիսկ այս կամ այն պատճառով այդ տարրերը, այնուամենայնիվ, թափանցում են, ապա պետք է ունենան իրենց օտարության հստակ ցուցիչները:

Ամեն անգամ օտար համակարգերից փոխառություններ կատարելուց հետո Ռուսաստանը կտրուկ կրճատում է շփումներն այդ համակարգի հետ՝ ձգտելով առավելագույն չափով մարսել փոխառված տարրերը /որոնք, միեւնույն է, որոշակի փոփոխություններ են առաջ բերում հասարակության արժեքային համակարգի եւ աշխարհայեցողության մեջ/ եւ միաժամանակ թույլ չտալ, որպեսզի այդ համակարգի անընդունելի կամ վտանգավոր մասնիկները մուտք գործեն իր ինքնության մեջ՝ դրա համար դիմելով դիցազաղափարական հիմնավորումների: Ժամանակին դա ուղղափառությունն էր, հետո՝ կոմունիստական գաղափարախոսությունը: Ներկայումս Մեծ Եվրասիական Ռուսաստանի դիցազաղափարախոսությունն ստեղծելու փորձ է կատարվում, ինչը, սակայն, դեռեւս լուրջ հարցականի տակ է:

Բոլոր պարագաներում, 1980-1990-ականների բարեփոխումների շրջանին հետեւեց ռեակցիան, որի դրսեւորումներից մեկը սեփական՝ հակաարեւմտյան աշխարհի կառուցման հնարավորությունների որոնումներն են:

Միաժամանակ, հիմնավորված կասկածներ կան, որ այդ փորձերն իմիտացիոն բնույթ ունեն, քանի որ ֆինանսատնտեսական առումով Ռուսաստանը ներկայումս շատ ավելի ինտեգրված է Արեւմուտքի հետ, քան երբեւիցե իր պատմության ընթացքում: Իմիտացիան անհրաժեշտ է իշխանության համար տարվող պայքարում հաղթանակ տանելու համար, ինչը փայլուն կերպով ցույց տվեց Ռուսաստանի ներկայիս նախագահը՝ վերացնելով թե՛ քաղաքական եւ թե՛ տնտեսական դիմադրության բոլոր կենտրոնները:

Իշխանության համար պայքարի ներկայիս փուլն արդեն միանգամայն հստակ պալատական բնույթ ունի: Սա նշանակում է, որ պետության եւ հասարակության զարգացման ուղիների մասին իրական, սկզբունքային որոշումները դեռ առջեւում են:

**ԱԲԴՈՒԼԼԱՅ ԳՅՈՒԼԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ.  
ԹՈՒՐՔԻԱՆ ԻՍԼԱՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՇԽԱՐՀԻԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
Արաքս Փաշայան**

2007թ. օգոստոսի 28-ին Թուրքիայում խորհրդարանական գործընթացի երրորդ փուլի արդյունքում իշխող իսլամամետ Արդարություն եւ զարգացում կուսակցությունից /ԱԶԿ/ առաջադրված Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբդուլլահ Գյուլի ընտրվելը նախագահի պաշտոնում կարելի է համարել Թուրքիայի Յանրապետության ամենաբարդ քաղաքական գործընթացներից մեկը: Այդպիսով, Թուրքիան դառնում է մահմեդական բնակչությամբ աշխարհիկ մի երկիր, որի նախագահը հրապարակային առումով մահմեդական է՝ հետեւում է իսլամական ծիսակարգին, մեծ տեղ է տալիս իսլամական հռետորականությանը, իսկ նրա կինը, իսլամական ավանդույթի համաձայն, գլխաշոր է կրում:

Աշխարհիկ շրջանակներն այս իրողությունը դիտարկում են որպես սպառնալիք թուրքական լաիցիզմի սկզբունքներին, որն ամրագրվել է դեռեւս 1923-ին: Ջինվորական ընտրանին, որը չորս անգամ /1960, 1971, 1980, 1997թթ./ կանխել է աշխարհիկ կարգերին ուղղված սպառնալիքը, հերթական անգամ Գյուլին մեղադրում է երկրի բնույթը փոխելու մտադրության մեջ: Մինչդեռ վերջինս հավաստիացնում է, որ հավատարիմ է մնալու հանրապետության հիմնարար սկզբունքներին՝ աշխարհիկությանն ու ժողովրդավարությանը:

Ամեն պարագայում, թե՛ խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ-ի, թե՛ Գյուլի հաղթանակը վկայում են թուրքական հասարակության մեջ առկա իսլամականացման միտումների մասին, ինչի ապացույցն են նաեւ վերջին շրջանում Թուրքիայում մեծ թափ ստացած գլխաշորի մասին հասարակական քննարկումները:

Տարիներ շարունակ իսլամական աշխարհում առկա է աշխարհիկության եւ իսլամիզմի դիսկուրսը, եւ այս առումով՝ Թուրքիայում ԱԶԿ-ի իշանության գալը իսլամական աշխարհում դիտարկվում է որպես հետաքրքիր փորձառություն եւ հասարակական նոր մոդելի ձեւավորման գործընթացի սկիզբ:

Զնայած ԱԶԿ-ի ժողովրդավարական կուրսի խոցելիությանը,

Բոստոնի համալսարանի միջազգային հարաբերությունների կենտրոնի տնօրեն Յուսեյն Յականիի կարծիքով՝ եթե կառավարություններն իսլամական աշխարհում բաց լինեն ժողովրդավարության առաջ, ապա կծնվի քաղաքական մի նոր շարժում, ինչպիսին ԱԶԿ-ն է, որը միավորում է հանդուրժողականությունն իսլամական ավանդույթի հետ:

Իսլամական աշխարհում հակոտնյա գաղափարախոսությունների պայքարի համատեքստում այսօր Թուրքիան, որի նկատմամբ երկար տարիներ իսլամական աշխարհը վերապահ մոտեցում ուներ /հաշվի առնելով վերջինիս աշխարհիկ բնույթն ու բազմակողմ համագործակցությունն Արեւմուտքի եւ Իսրայելի հետ/ ձգտում է փոխկապակցության մեջ դնել իսլամական եւ արեւմտյան արժեքները, ինչը, սակայն, մշակված չէ հայեցակարգային առումով: Ըստ այդմ՝ ճիշտ չէ ԱԶԿ-ն համարել իսլամիստական գաղափարախոսություն ունեցող կուսակցություն, քանի որ իսլամիզմը կրոնաքաղաքական փիլիսոփայություն է, որն աչքի է ընկնում արմատական մոտեցումներով եւ առաջ է քաշում պետության եւ հասարակության մեջ շարիաթական սկզբունքների ներդրման գաղափարը: Այսօր դեռեւս հստակ չեն ԱԶԿ-ի հետագա քայլերը: Սակայն մի բան պարզ է, որ ներկայումս ավելի հաճախ է խոսվում այն մասին, թե Թուրքիան շարժվում է չափավոր իսլամի ուղիով, չնայած Էրդողանը վերջերս իր ելույթներից մեկում նշեց, որ իրենք չեն ընդունում «չափավոր իսլամ» եզրը:

Ընտրություններում Գյուլի հաղթանակը լայն արձագանք գտավ իսլամական աշխարհում: Այն որոշակի ոգեւորությամբ ընկալվեց Իրանի նախագահ Մ.Ահմադինեժադի կողմից: Վերջինս հույս ունի, որ Գյուլի օրոք երկկողմ հարաբերությունները բոլոր ոլորտներում կգարգանան առավել քան լավ:

Արաբական աշխարհում, որտեղ վարչակարգերի մեծ մասը ավտորիտար է, ընտրությունների նկատմամբ արձագանքը որոշակիորեն պասիվ էր, ինչը պայմանավորած է թուրքական փորձի ընդլայնման նկատմամբ առկա մտավախությամբ: Պետության կողմից վերահսկվող լրատվամիջոցները շատ դեպքերում անտեսեցին ընտրությունների արդյունքները՝ այդ մասին տրամադրելով միայն տեղեկատվություն: Ընտրություններին հաջորդած օրերին արաբական շատ թերթեր միայն համեմատություններ էին անցկացնում Թուրքիայի եւ արաբական երկրների միջեւ, մատնանշում Թուրքիայի առաջ ծառայած քրդական, հայկական խնդիրները, Կիպրոսի հարցը: Մինչդեռ վարչակարգերին ընդդիմախոս ուժերը, քաղաքացիական հասարակության եւ ժողովրդավարության ակտիվիստները ողջունեցին ԱԶԿ-ի հաղթանակը: Անկախ

մամուլը դրականորեն արձագանքեց ընտրություններին, քանի որ դրանք անցել են դեմոկրատական ճանապարհով, ինչը կարող է նախադեպ դառնալ նաեւ արաբական երկրների համար, որտեղ այդ փորձառությունը չկա:

Թուրքիայի նախագահի պաշտոնում Աբդուլլահ Գյուլի ընտրությունն արաբական երկրներում վերաճեց իսլամիզմի մասին դիսկուրսի, ինչն այսօր առաջնահերթ տեղ ունի իսլամական աշխարհի քաղաքական օրակարգում: Իսլամական չափավորների /պոստ-իսլամիստների/ եւ նրանց համախոհների կարծիքով՝ Թուրքիայում կայացած ընտրությունները ցույց են տալիս, որ իսլամական արմատներ ունեցող կուսակցությունը կարող է որդեգրել ժողովրդավարության սկզբունքը, ինչը վերստին ապացուցում է, որ ժողովրդավարությունը եւ իսլամը համատեղելի գաղափարներ են: Ըստ այդմ՝ Գյուլի ընտրությունը լիովին հաջողված փորձ է, որը խրախուսում է չափավոր իսլամը:

«Յամաս» շարժումը Գյուլի հաղթանակը դիտարկեց որպես իսլամական աշխարհում իսլամիզմին միտված եւ աշխարհիկությանը հակադրելու ձգտում, ինչը վկայում է, որ տարածաշրջանը շրջադարձ է կատարում դեպի իսլամը:

Արաբական մամուլում հայտնվեցին նաեւ հոդվածներ, որտեղ արաբական աշխարհում ժողովրդականությունը վայելող, իսլամական արդի շարժումներին ընդդիմախոս հեղինակները համեմատություններ էին անցկացնում չափավոր իսլամի արաբական եւ թուրքական փորձերի միջեւ՝ հօգուտ ԱԶԿ-ի: Նրանց կարծիքով՝ արաբական կրոնաքաղաքական կուսակցությունները, ի տարբերություն ԱԶԿ-ի, կառչած են մնում ժամանակավրեպ գաղափարախոսությունների: Մինչդեռ ԱԶԿ-ն ընկալվում է իսլամական չափավորության, առաջադիմության եւ ռացիոնալիզմի տեսանկյունից: Նշվում է, որ Թուրքիան թեւակոխում է նոր փուլ, որտեղ աշխարհիկությունը ձեռք ձեռքի տված քայլում է իսլամական գլխաշորի հետ, կամ էլ՝ Թուրքիայում տեղի է ունենում ազգայնականության եւ իսլամի հաշտեցում:

Իսլամական աշխարհում առկա առանձին տեսակետների համաձայն՝ Թուրքիայում տեղի ունեցող զարգացումներն, իրականում, ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության մերժման արդյունք են, ինչը հիմնավորվում է մշակութային եւ քաղաքակրթական տարբերություններով: Այս հանգամանքն է, որ նպաստել է, որպեսզի Թուրքիան հետ գնա դեպի իր արմատները:

Յատկանշական է, որ իսլամական աշխարհում գործուն քաղաքական գործչի համարում ունեցող Գյուլի հաղթանակը Թուրքիային նոր

Եւ կենտրոնական դեր է վերապահում Միջին Արեւելքում: Փաստ է, որ 2002-ին ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո Թուրքիայի արտաքին քաղաքականության միջինարեւելյան կամ իսլամական ուղղության մեջ որոշակի տեղաշարժեր են նկատվել: Թուրքիան ավելի հաճախ է խոսում իսլամական ունմայի եւ ընդհանուր խնդիրների մասին: Թուրքիան ակտիվորեն գործում է Իսլամական կոնֆերանս կազմակերպության մեջ եւ դրա կից կառույցներում: Կազմակերպության գլխավոր քարտուղարը Թուրքիայի ներկայացուցիչ եւ իսլամական աշխարհում բավական մեծ համարում ունեցող Էքմալուդդին Իսհանօղլուն է: Բացի Իսլամական կոնֆերանսից, Թուրքիան զգալիորեն ակտիվացրել է հարաբերություններն արաբական աշխարհի հետ՝ համագործակցելով նաեւ Արաբական պետությունների լիգայի հետ: Այս տեսանկյունից ուշագրավ է Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղար Ամր Մուսայի կարծիքը: Վերջինս համոզված է, որ Գյուլի նախագահության շրջանում Թուրքիան կարող է ջանքեր գործադրել՝ աջակցելու անկախ պաղեստինյան պետության ստեղծմանը եւ Իրաքի ճգնաժամի հաղթահարմանը:

Այսպիսով, Թուրքիան ընտրում է մի ճանապարհ, որը հեռու է թե՛ արմատական իսլամիզմից, թե՛ արմատական աշխարհիկությունից: ԱԶԿ-ն իրեն բնութագրում է ավելի շատ որպես չափավոր պահպանողական, քան իսլամիստական կուսակցություն, այն առաջ չի քաշում երկրում իսլամական օրենքների ներդրման գաղափարը, չնայած այսօր Թուրքիայում խոսվում է գլխաշորի արգելքի վերացման մասին օրենքի ընդունման հնարավորության շուրջ, ինչը, թերեւս, կարող է առաջ բերել զինվորականության կոշտ միջամտությունը: Ի դեպ, թե՛ Էրդողանը, թե՛ Գյուլը Էրբաքանի իսլամիստական շարժման ակտիվ մասնակիցներն են եղել եւ հայտնի են ժամանակին հնչեցրած իրենց արմատական իսլամական ելույթներով, ինչը ԱԶԿ-ի ընդդիմախոսներին առիթ է տալիս թերահավատորեն վերաբերվել լաիցիզմի սկզբունքներին հավատարիմ մնալու կուսակցության խոստումներին:

Հատկանշական է, որ չնայած իսլամամետությանը, ԱԶԿ-ի գործիչները, այդ թվում Գյուլը, որքան էլ դա հակասական թվա, միեւնույն ժամանակ, համարվում են լիբերալ, արեւմտամետ ուժեր: ԱԶԿ-ի առաջնորդ Էրդողանի օրոք Թուրքիան ձեռնամուխ եղավ ԵՄ-ին անդամակցության գործընթացին: Շարունակվեցին սերտ հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, ազատականացման եւ որոշակի առաջընթացի ուղիով ընթացավ տնտեսության զարգացումը, մեծացավ օտարերկրյա ներդրումների չափը, առանձին ոլորտներում իրականացվեցին որոշակի բարեփոխումներ:

Ընտրություններում ԱԶԿ-ի հաղթանակը, ինչպես նաև իսլամական աշխարհում չափավոր իսլամիզմի արժեհամակարգի ներդրումը կարող է պայմանավորված լինել նաև տարածաշրջանում ԱՄՆ քաղաքական ձգտումներով: Չի բացառվում, որ Թուրքիան դառնա մոդել իսլամական այլ, այդ թվում՝ արաբական երկրների համար: ԱՄՆ պետդեպարտամենտի հայտարարության մեջ նշված է. «Մենք ողջունում ենք թուրքական ժողովրդավարության այս փորձը: Այն շարունակում է այդ երկրում դեմոկրատական զարգացման կուրսը»:

Թուրքիայի հեռանկարի հետ կապված դիտարկումների տեսանկյունից հետաքրքրական է նաև թուրք քաղաքական մեկնաբան Ջենգիզ Ջանդարի տեսակետը. «Դուք չպետք է ակնկալեք արմատական փոփոխություններ Գյուլից՝ որպես նախագահ: Նրա ընդդիմախոսները, ովքեր խուճապի մեջ են, որ նա կանի դա, անակնկալի կգան, իսկ նրա աջակիցները, արմատական տեղաշարժերի հույսեր ունենալով, կհիասթափվեն»:

## **ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ Սարգիս Հարությունյան**

Ա.թ. սեպտեմբերի 13-ին ԱՄՆ նախագահ Բուշ-կրտսերը հայտարարեց Իրաքից ամերիկյան ռազմուժի դուրսբերման մեկնարկի մասին<sup>1</sup>, եւ ըստ այդմ հանրապետականները չկարողացան խափանել 2008թ. նախագահական եւ Կոնգրեսի ընտրություններին ընդառաջ իրենց համար խիստ անբարենպաստ թեման (իրաքյան պատերազմը) նախընտրական հիմնական հարց դարձնելու դեմոկրատների ծրագիրը: Սակայն նշված հանգամանքներն, ըստ ամենայնի, էական ազդեցություն չեն ունենա Մերձավոր Արեւելքում Վաշինգտոնի առաջիկա քաղաքականության վրա: Ավելին՝ իր այդ որոշմամբ Սպիտակ տունը միայն ուժեղացնում է ամերիկյան դիրքերը տարածաշրջանում: Ընդհանուր առմամբ, նման որոշման կայացումը պետք է ընկալել որպես Մերձավոր Արեւելքում նոր իրավիճակի սկզբնավորման ցուցիչ:

### **«Մարշալի պլան» Մերձավոր Արեւելքի համար**

Ամերիկյան արտաքին քաղաքականության ավանդույթներին համապատասխան, ԱՄՆ-ը ձեռնամուխ է եղել այս անգամ Մերձավոր Արեւելքում «Մարշալի պլանի» իրականացմանը: Թեեւ վերջինիս բովանդակությունն ու ծավալները տարբեր են Երկրորդ աշխարհամարտից հետո Արեւմտյան Եվրոպային ու ճապոնիային առաջարկվածներից, սակայն տրամաբանությամբ ու հետապնդվող նպատակներով դրանք շատ մոտ են:

Ա.թ. հուլիսի 28-ի եւ 29-ի հրապարակումների համաձայն՝ առաջիկա 10 տարիներին ԱՄՆ-ը Իսրայելին, Եգիպտոսին տրամադրելու է, համապատասխանաբար, \$30 մլրդ-ի ու \$13 մլրդ-ի ռազմատեխնիկական

---

<sup>1</sup> Սպիտակ տան ղեկավարի խոսքերով՝ մինչեւ այս տարվա դեկտեմբերի 25-ը, երբ ԱՄՆ-ում կնշեն Սուրբ ծնունդը, Իրաքից դուրս են բերվելու 5700 զինվորականներ, իսկ մինչեւ 2008թ. հուլիս դուրս կբերվի եւս 21500-ը: Նախատեսվում է արդեն սույն սեպտեմբերի վերջից սկսել դուրսբերման գործընթացը, երբ Իրաքի Անբար նահանգը կլքեն 2200 ծովային հետեւակայիններ: Ընդհանուր առմամբ, 2008թ. օգոստոսի սկզբի դրությամբ Իրաքում գտնվող ամերիկյան ռազմուժի թվաքանակը պետք է կազմի մոտ 130 000 զինվոր:

օգնություն: Բացի այդ, Սաուդյան Արաբիայի եւ Պարսից ծոցի արաբական միապետությունների /Քուվեյթ, Բահրեյն, Կատար, Արաբական Միացյալ Էմիրություններ, Օման/ հետ Միացյալ Նահանգները, նույն ժամանակահատվածի կտրվածքով, կնքելու է \$20 մլրդ-ի ռազմատեխնիկական մատակարարումներ իրականացնելու մասին պայմանագրեր:

Ըստ նախնական տեղեկությունների, մերձավորարեւելյան նշված պետություններին առաջարկվող ամերիկյան ռազմատեխնիկական \$63 մլրդ-ոց փաթեթի հիմնական մասը վերաբերում է ռազմաօդային ուժերին, հակահրթիռային ու հակաօդային պաշտպանության համակարգերին: Օրինակ, ծրագրի շրջանակներում նախատեսվում է մոտ երկու անգամ մեծացնել սաուդյան ռազմաօդային ուժերը՝ էր Ռիյադին վաճառելով «F-15E», «F-16C», «F-16D» եւ անգամ նորագույն «F-22 Raptor»<sup>2</sup> մարտական ինքնաթիռներ: Իսրայելական աղբյուրները նշում են, թե նման ծրագրի իրականացման պարագայում Սաուդյան Արաբիայի օդուժն իր հզորությամբ եւ արդիականության մակարդակով կարող է անգամ անցնել իսրայելականին՝ գերազանցելով նաեւ իրանական, թուրքական եւ եգիպտական օդուժերին՝ Մերձավոր Արեւելքում դառնալով ամենահզորը:

Պակաս տպավորիչ չեն նաեւ Իսրայելին հատկացվող միջոցները: Առաջիկա 10 տարիների համար հրեական պետությանը \$30 մլրդ-ի հատկացումը ոչ միայն նշանակում է յուրաքանչյուր տարի թեւ Ավիվին փոխանցվող ամերիկյան ռազմական օգնության 25%-ոց աճ, այլեւ գալիք ժամանակահատվածում լիովին նոր հարթություն է տեղափոխվելու ամերիկա-իսրայելական ռազմական փոխգործակցությունը՝ ձեռք բերելով ինտեգրված համակարգի բնույթ: Այսպես, նախատեսվում է մինչեւ 2013թ. ավարտին հասցնել ամերիկա-իսրայելական հակահրթիռային պաշտպանության համատեղ համակարգի հիմնումը, որի ուղղությամբ միայն Պենտագոնի ծախսերը կկազմեն մոտ \$3.8 մլրդ: Այն պետք է հրեական պետությանը պաշտպանի իրանական, սիրիական ու պաղեստինա-լիբանանյան տարբեր տրամաչափերի հրթիռներից:

<sup>2</sup> Ամերիկյան «F-22 Raptor» մարտական ինքնաթիռները ԱՄՆ ռազմաօդային ուժերի շարքեր սկսել են մուտք գործել միայն 2005թ. դեկտեմբերից եւ մինչ օրս որեւէ այլ երկրի չեն վաճառվել՝ Կոնգրեսի կողմից հաստատված օրենսդրական արգելքի պատճառով: Միայն այս տարվա մարտին ԱՄՆ Կոնգրեսը հանեց նշված արգելքը: Իսրայելը բազմիցս է հայտարարել, թե իր օդուժը այդ ինքնաթիռների կարիքն ունի, որպեսզի կարողանա պահպանել ռազմավարական գերազանցությունը Մերձավոր Արեւելքում: Այդ իսկ պատճառով թեւ Ավիվը դեմ է Սաուդյան Արաբիային «F-22 Raptor»-ների վաճառքին:

Ձուտ ռազմատեխնիկական կողմից բացի, Մերձավոր Արեւելքում ամերիկյան նոր նախաձեռնությունն ուղեկցվեց նաեւ դիվանագիտական լուրջ ակտիվությամբ, որը նշանավորվեց ս.թ. հուլիսի 30-ից սեպտեմբերի 2-ը ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսի ու պաշտպանության նախարար Ռոբերթ Գեյթսի մերձավորարեւելյան այցով:

Նման ձեւաչափով այցելության նախապատրաստումն ու իրականացումը /մասնավորապես, Ռայս-Գեյթսի հանդիպումները Եգիպտոսի ու Պաղեստինի Ինքնավարության նախագահների, Սաուդյան Արաբիայի թագավորի, Իսրայելի վարչապետի ու Պարսից ծոցի արաբական միապետությունների արտգործնախարարների հետ/, առաջին հերթին, պետք է վկայեն կոնկրետ պայմանավորվածությունների մասին:

Մերձավորարեւելյան մինի «Մարշալի պլանի» համատեքստում ներկայումս Իրանի նկատմամբ կիրառվում է ԱՄՆ արտաքին քաղաքականության համար ավանդական դարձած զսպման ռազմավարությունը՝ իր ռազմաքաղաքական, դիվանագիտական ու տնտեսական բաղկացուցիչներով:

Արեւմտյան աղբյուրների համաձայն՝ Իրանի դեմ Վաշինգտոնի ձեռնարկած զսպման ռազմավարությունն ունենալու է ռազմաքաղաքական երեք խոշոր գիծ.

❖ *Իրաք*. այդ երկրում ամերիկյան ռազմուժի մասնակի կրճատումից հետո ընթանալու է վերադասավորում, որի արդյունքում այդ երկրի գլխավորապես կենտրոնական ու հյուսիսային մասերում՝ բնակավայրերից հնարավորինս հեռու, ստեղծվելու են ամերիկյան ռազմակայաններ,

❖ *Պարսից ծոց*. ԱՄՆ-ը ոչ միայն հզորացնելու է Ծոցի արաբական միապետությունների ռազմական կարողությունները, այլեւ ընդլայնելու է իր ռազմական ներկայությունը եւ ենթակառուցվածքները,

❖ *Կարմիր ծով*. Իսրայելի, Չորդանանի ու Եգիպտոսի ռազմական կարողությունների հզորացումը նպատակ է ունենալու ապահովել առաջին երկու գծերի թիկունքը:

Այսպիսով, թեւեւ պաշտոնական հաղորդագրությունների համաձայն, մերձավորարեւելյան նշված երկրներին ամերիկյան ռազմատեխնիկական \$63 մլրդ-ոց փաթեթի տրամադրման հետ կապված բանակցությունները դեռ ընթացքի մեջ են, իսկ Սաուդյան Արաբիայի մասով ԱՄՆ Կոնգրեսում կա որոշակի ընդդիմություն, սակայն հիմնական հետեւությունը պետք է այն լինի, որ Մերձավոր Արեւելքում հակաիրանական դաշինքի ձեւա-

վորման գործում Վաշինգտոնը հասել է սկզբունքային հաջողության: Որպես ցուցիչ պետք է ընկալել վերոհիշյալ ռազմատեխնիկական փաթեթի մասին Վաշինգտոնի հայտարարությունը:

### **Գործընթացի ցուցիչներ**

Գոյություն ունեն առնվազն երեք ցուցիչներ, որոնք կարող են վկայել Մերձավոր Արևելքում իրադրության ընդհանուր փոփոխության մասին:

Առաջին՝ պետք է հատուկ ուշադրություն դարձնել ներկայումս բավական ակտիվ ընթացող իսրայելա-պաղեստինյան հաշտության բանակցություններին: Իսրայելա-պաղեստինյան հաշտության ձեռքբերումը եւ պաղեստինյան պետության ստեղծումը ԱՄՆ-ի կողմից դիտարկվում է որպես տարածաշրջանում իրանական ազդեցությունը կրճատող լուրջ քայլ, եւ այդ առումով ներկայումս ամերիկյան դիվանագիտությունը շոշափելի ճնշում է բանեցնում հատկապես թե՛ Ավիվի ուղղությամբ՝ արդեն այս նոյեմբերին Վաշինգտոնում կայանալիք հարցին նվիրված միջազգային համաժողովում կոնկրետ արդյունքներ ունենալու համար:

Ս.թ. հուլիսի 25-ին հայտնի դարձավ, որ Իսրայելի վարչապետ Էհուդ Օլմերթը եւ Պաղեստինի Ինքնավարության նախագահ Մահմուդ Աբասը սկզբունքային համաձայնության են հանգել պաղեստինյան պետության ստեղծման շուրջ, իսկ արդեն օգոստոսի 28-ին արաբական հանրահայտ «Al-Jazeera» հեռուստաալիքը հրապարակեց հաշտության պայմանագրի նախագծի որոշ դրույթներ:

Թե՛ւ բանակցություններն ընթացքի մեջ են, սակայն եթե Միացյալ Նահանգներին ու նրա դաշնակիցներին հաջողվի արդեն նոյեմբերին «ճեղքում» գրանցել խնդրի առնչությամբ, ապա դա պետք է ընկալել որպես տարածաշրջանային իրադրության փոփոխության առաջին լուրջ նշան:

Կարելի էրկրորդ ցուցիչը կլինի Բաղդադի կենտրոնական կառավարության անկումը: Սեպտեմբերի 5-ին ԱՄՆ Կոնգրեսի վերահսկիչ մարմնի՝ Government Accountability Office-ի կողմից հրապարակված զեկույցի համաձայն՝ ալ-Մալիքի կառավարությունը չի լուծել իր առջև դրված 18 առանցքային խնդիրներից 11-ը: Հիշեցնենք, որ ավելի վաղ՝ օգոստոսի վերջին, Ֆրանսիայի արտգործնախարար Բեռնար Կուլեները ամերիկյան «Newsweek»-ին տված հարցազրույցի ժամանակ ուղղակի հայտարարել էր, թե Իրաքի կենտրոնական կառավարությունն անարդյունավետ է, ուստի պետք է հրաժարական տա:

Եթե Միացյալ Նահանգները որոշում է կայացրել հասնել ալ-Մալիքիի կառավարության լուծարմանը, ապա դա պետք է ընկալել որպես Իրանի հետ իրաքյան հարցում առկա պայմանավորվածություններից հրաժարում:

Եվ վերջապես, որպես երրորդ ցուցիչ պետք է դիտարկել նախորդ շաբաթներին նկատվող ամերիկա-ֆրանսիական բավական լուրջ մերձեցումը: Թեև այդ միտումը սկիզբ առավ դեռևս անցած տարվանից՝ լիբանանյան հարցի կապակցությամբ, սակայն Սարկոզիի իշխանության գլուխ գալը նշանավորվեց Վաշինգտոնի հետ նոր մակարդակի եւ, ըստ ամենայնի, համալիր փոխպայմանավորվածությունների ձեռքբերմամբ: Այդ իրողությունը հատկապես նկատելի է մերձավորարեւելյան գործերում: Այս հուլիսի 27-ին Միջերկրական ծովում համատեղ զորավարություններից հետո, որին մասնակցում էին ֆրանսիական «Charles De Gaulle» եւ ամերիկյան «Enterprise» ավիակիրները, բնութագրիչ երկրորդ իրադարձությունը սեպտեմբերի 16-ին Իրանի հասցեին Բեռնար Կուշների հնչեցրած՝ Փարիզի համար աննախադեպ կոշտ հայտարարությունն էր, թե միջազգային հանրությունը պետք է պատրաստ լինի Իրանի դեմ պատերազմին՝ կապված վերջինիս միջուկային ծրագրի հետ:

Իրանական հարցում ֆրանսիական քաղաքականության նման տեղաշարժը չի կարող չվկայել տարածաշրջանում սպասվող փոփոխությունների մասին:

## **ԻՐԱՆ. ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

*2007թ. սեպտեմբերի 5-ին Իրանի նախկին նախագահ Ա.Ա. Հաշեմի-Ռաֆսանջանի ընտրությունը Փորձագիտական վեհաժողովի նախագահի պաշտոնում եւ մինչ այդ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ղեկավարի ազատումը զբաղեցրած պաշտոնից բավական կարեւոր իրադարձություններ են Իրանի ներքաղաքական կյանքում: Վերը նշված զարգացումները Իրանում տեղ գտած որակական փոփոխությունների մասն են կազմում՝ պայմանավորված ԱՄՆ-ի կողմից ռազմուժի կիրառման հնարավորության մեծացմամբ եւ Իրանի ներսում վարչական ու քաղաքական ռեսուրսի վերաբաշխմամբ:*

Այս տարվա հունիս–հուլիսին, Իրան–ԱՄՆ բանակցային գործընթացում որոշակի դրական տեղաշարժերով պայմանավորված, միջազգային լրատվական եւ վերլուծական շրջանակներում սկսեցին ավելի հաճախ երեւալ կարծիքներ ու տեսակետներ այն մասին, թե Իրանում արմատական քաղաքական ուժերի դիրքերը թուլանալու միտում ունեն: Սա առաջին հերթին վերաբերում է նախագահ Մ.Ահմադինեժադի կողմնակիցներին, որոնք բավական համեստ արդյունքների հասան անցած տարի կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: Այս հարցերին նվիրված մի վերլուծական հրատարակեց ամերիկյան հանրահայտ «Foreign Policy» ամսագիրը, որն ուշագրավ վերնագիր ուներ՝ «Ahmadinejobless», այսինքն՝ «Գործազուրկ Ահմադինեժադ»: Հոդվածի հիմնական տեսակետներից մեկն այն էր, թե Իրանի ներքաղաքական դաշտում նախագահի դիրքերն աստիճանաբար թուլանում են, եւ դա չի կարելի բացատրել միայն քաղաքական ընտրանու կողմից նրա վարած կուրսի նկատմամբ ոչ այնքան դրական վերաբերմունքով, այլ նաեւ նրանով, որ բուն իրանական հասարակությունը սկսում է ավելի քննադատաբար գնահատել նախագահին եւ նրա սոցիալ-տնտեսական քաղաքականությունը:

Սակայն միայն այս հարցերը չեն, որ պայմանավորում են նախագահի դիրքերի թուլացումը եւ քաղաքական ռեսուրսի վերաբաշխումը: Նշենք մի քանի իրողություններ, որոնք, մեր կարծիքով, անմիջականորեն ազդում են երկրում քաղաքական իրավիճակի վրա:

**Ալի Խամենեյի առողջական վիճակի անորոշությունը.** 2006-ին առաջին անգամ հայտնվեցին չհաստատված լուրեր այն մասին, որ Իրանի հոգեւոր առաջնորդ Ալի Խամենեյին մահացել է: Այդ լուրերը մատնանշում են ոչ թե Իրանի դեմ տեղեկատվական եւ հոգեբանական պատերազմի ընթացքը, այլ այն իրողությունները, որոնք առկա են երկրի հոգեւոր առաջնորդի շուրջ. փաստ է, որ նրա առողջական վիճակը վատ է, եւ դրա վկայություններից մեկը Ա.Խամենեյի՝ հասարակությանը սակավ հայտնվելն է: Նման իրավիճակը տեսականորեն մի քանի զարգացում եւ հետեւանք կարող է ունենալ.

1. Հոգեւոր առաջնորդի մահը կբերի նոր առաջնորդի ընտրության, եւ այս գործընթացում առաջնային ազդեցություն կունենա 86 հոգուց բաղկացած Փորձագետների վեհաժողովը, որը եւ իրավասու է ընտրել նոր հոգեւոր առաջնորդին: Ինչպես վերը նշվեց, սեպտեմբերի 5-ին Փորձագետների վեհաժողովի նախագահ է ընտրվել Իրանի նախկին նախագահ Ա.Ա.Հաշեմի Ռաֆսանջանին:

2. Հոգեւոր առաջնորդի առողջության կտրուկ վատթարացումը տեսականորեն կարող է բերել նրա պաշտոնազրկմանը, եւ այստեղ նույնպես որոշումներ կայացնող մարմինը Փորձագետների վեհաժողովն է:

3. Հոգեւոր առաջնորդի առողջության վատթարացումը կարող է հանգեցնել նրան, որ կնվազի վերջինիս՝ քաղաքական եւ տնտեսական գործընթացներին մասնակցությունը: Այս իրավիճակում նախագահի ազատությունը կարող է ավելի նշանակալի դառնալ, այսինքն՝ Ահմադինեժադը կարող է ավելի ազատ գործել թե՛ ներքաղաքական, թե՛ արտաքին քաղաքական դաշտում: Իսկ այդ պարագայում նախագահի ազատության սահմանափակման մարմին կարող է դառնալ խորհրդարանը, որի նոր կազմի ընտրությունները տեղի են ունենալու 2008-ի մարտին:

**2008-ի խորհրդարանական եւ 2009-ի նախագահական ընտրությունները.** Ինչպես նշեցինք, 2008-ի մարտին Իրանում տեղի կունենան խորհրդարանական ընտրություններ: Դրանց արդյունքում երկրում պետք է ավարտվի քաղաքական ուժերի վերադասավորման գործընթացը, որը հիմք կստեղծի նախագահական ընտրությունների շատ թե քիչ կանխատեսելի եւ կայուն ընթացքի համար:

Սակայն Իրանի քաղաքական ուժերն այսօր դեռեւս պայքարում են խորհրդարանական ընտրություններում հաջողության հասնելու համար: Ինչպիսին կլինի հաջորդ խորհրդարանը՝ թերեւս, հնարավոր է մասամբ կանխատեսել. այնտեղ գրեթե չեն լինի, այսպես կոչված, բարեփոխիչ-

ների ներկայացուցիչներ, իսկ հիմնական պայքարը կընթանա, պայմանականորեն ասած, հին պահպանողականների եւ նոր պահպանողականների միջեւ: Եթե գնահատականները տրվեն արեւմտյան դասական քաղաքագիտական տերմիններով, ապա կարելի է ասել, որ պայքարն ընթանալու է կենտրոնամետների /համախմբված Ռաֆսանջանիի եւ այլ առաջնորդների շուրջ/ եւ աջ ծայրահեղականների /համախմբված նախագահի, արմատական հայացքներ կրող այաթուլանների շուրջ/ միջեւ:

Մեր կարծիքով՝ հենց գալիք խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների պայքարի մոտալուտ սկիզբն է հիմք հանդիսացել Իսլամական հեղափոխության պահպանների կորպուսի /ԻՅՊԿ/ ղեկավար, գեներալ Յ.Սաֆավիի հեռացման համար: Գեներալ Սաֆավին երկար տարիներ ղեկավարել է կորպուսը եւ աչքի է ընկել իսլամական վարչակազմին եւ հոգեւոր առաջնորդին անձնվեր ծառայությամբ: Օգոստոսին ամերիկյան կողմի հայտարարությունը, թե Վաշինգտոնը ցանկանում է ԻՅՊԿ-ն ընդգրկել ահաբեկչական կազմակերպությունների ցանկում, չէր կարող նրա ղեկավարի պաշտոնանկության հիմք հանդիսանալ. նախ, Իրանի կողմից պարզապես նահանջ կլիներ՝ Վաշինգտոնի պատճառով աշխատանքից հեռացնել ԻՅՊԿ ղեկավարին, եւ երկրորդ՝ կազմակերպության ղեկավարի հեռացումը չի նշանակում կազմակերպության լուծարում եւ այդ իսկ պատճառով այն չի կարող ազդել ԱՄՆ հնարավոր որոշումների վրա: Որ Յ.Սաֆավիի հեռացումը կապված չէ ԱՄՆ դիրքորոշման հետ, ակնհայտորեն երեւում է գոնե այն բանից, թե իրեն ինչպես դրսեւորեց ԻՅՊԿ նորանշանակ ղեկավար Մահմուդ Ալի Ջաֆարին. սեպտեմբերի 10-ին ԻՅՊԿ սպայակույտի հետ հանդիպման ժամանակ նա իր ելույթի նշանակալի մասը նվիրեց հակամերիկյան հայտարարություններին եւ Վաշինգտոնի քաղաքականության սուր ու ագրեսիվ քննադատությամբ: Նշենք, որ Մ.Ա. Ջաֆարին բրիգադի գեներալ է եւ ակտիվ մասնակցություն է ունեցել իրանա-իրաքյան պատերազմում: ԱՄՆ դեսպանատան գրավումից հետո ներիրանական քաղաքական զարգացումներում նա որեւէ ակտիվ մասնակցություն չի ունեցել:

Եթե ճիշտ են այն տեղեկությունները, թե Իրանի հոգեւոր առաջնորդ Ա.Խամենեին վատառողջ է եւ սկսելու է ավելի պակաս չափով ազդել երկրի զարգացումների վրա, ապա իրոք առկա է նշանակալի քաղաքական ճգնաժամի հիմք: Նման ճգնաժամի ծավալման համար ավելի քան հիմնավոր պատճառ կարող են դառնալ հենց խորհրդարանական ընտրությունները, որոնք իսկական պայքարի թատերաբեմի վերածվելու ներուժ ունեն: Այս պարագայում բավական կարելոր դեր է ունենալու

ԻՅՊԿ կողմնորոշումը, որը տիրապետում է քաղաքական գործընթացների վրա ազդելու մեծ պոտենցիալի: Հոգեւոր առաջնորդի հիվանդության կամ պասիվության պարագայում թե ում կապաշտպաններ Յ.Սաֆավին՝ շատ կարեւոր հարց է, հաշվի առնելով այն, որ Իրանի ներկայիս նախագահը ԻՅՊԿ նախկին սպա է եւ միշտ էլ վայելել է այս կառույցի աջակցությունը:

Այսպիսով, խորհրդարանական եւ նախագահական ընտրություններից առաջ ԻՅՊԿ ղեկավարի փոփոխությունը բավական լուրջ ազդեցություն կունենա ընտրությունների ընթացքի վրա եւ, հավանաբար, հոգեւոր առաջնորդի կողմից արված քայլ է՝ ուղղված հին պահպանողականների եւ նրանց շահերի պաշտպանությանը:

**Արտաքին գործոնի ազդեցությունը.** Վերը նշված «Գործազուրկ Ահմադինեժադ» հոդվածում կիսալուրջ, սակայն իրականությանը որոշ չափով համապատասխանող տեսակետ է նշվում այն մասին, որ Իրանում ստեղծված ներքաղաքական իրադրության պայմաններում Մ.Ահմադինեժադին իշխանությունը պահելու գործում կարող է օգնել միայն ԱՄՆ նախագահ Ջ.Բուշը: Խոսքն, ընդհանուր առմամբ, այն մասին է, որ ԱՄՆ ռազմատենչ հայտարարությունները եւ Վաշինգտոնի՝ Իրանի դեմ ռազմուժ կիրառելու հնարավորությունը որոշակի օբյեկտիվ եւ արդարացված հիմք են ստեղծում Մ.Ահմադինեժադի իշխանության պահպանման համար: Կարող է արդյոք Իրանի նախագահը գնալ ԱՄՆ-ի հետ հակամարտության սրացման սեփական իշխանությունը պահպանելու համար հարցին անգամ հարաբերական վստահությամբ պատասխանել չի կարելի:

Սակայն փաստ է, որ արտաքին աշխարհի հետ շատ թե քիչ բարիդրացիական հարաբերություններ ունենալու մեջ շահագրգիռ իրանական քաղաքական եւ տնտեսական շրջանակները, մանավանդ նրանք, ում ֆինանսական եւ տնտեսական բարեկեցությունը կախված է արտերկրի հետ հարաբերություններից ու համագործակցությունից, լրջորեն տուժում են թե՛ Մ.Ահմադինեժադի ներքին սոցիալական քաղաքականությունից, թե՛ արտաքին քաղաքականությունից, որի արդյունքում շուտով Իրանի տնտեսության միակ ոլորտը, որը չի ենթարկվի միջազգային պատժամիջոցներին, կդառնա նավթի արտահանումը, որն առանց այդ էլ հիմնականում ղեկավարվում է պետության կողմից:

Այս պարագայում Իրանի ներկա ներքաղաքական վերադասավորումները կարող են արդյունք լինել այն անհանգստության, որն առկա է ԱՄՆ-ի եւ արտաքին աշխարհի հետ հարաբերություններում: Այս

վերադասավորումները, որոնք գալիք խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների նախապատրաստությունն են, կարող են բերել Իրանի արտաքին քաղաքական գծի եւ մասամբ դրա մաս կազմող միջուկային քաղաքականության վերիմաստավորման:

Ակնհայտ է, որ Իրան-ԱՄՆ հարաբերությունների անսպասելի եւ արագ բարելավման մասին խոսք անգամ չի կարող միջպետական հակամարտության հիմքում ընկած է ոչ թե իրանական վարչակարգի բնույթը կամ քաղաքականությունը, այլ այն, որ Իրանն արդեն իսկ դարձել է ԱՄՆ թիվ մեկ մրցակիցը Սերժավոր Արեւելքում ազդեցության աճի եւ պահպանման համար մղվող պայքարում:

Ունենալով հիմնականում պետական նշանակության պատճառներ՝ ներքաղաքական զարգացումներն Իրանում Թեհրանի տարածաշրջանային քաղաքականության նշանակալի փոփոխությունների չեն հանգեցնի: Սա վերաբերում է նաեւ Հարավային Կովկասին եւ Հայաստանին, որտեղ Իրանի ներկայիս քաղաքական գիծն արտացոլում է Թեհրանի բնական շահերի պաշտպանության քաղաքականությունը:

## **ԱՄՆ–ԻՐԱՆ ԱՌՃԱԿԱՏՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼ** **Վլադիմիր Մեսամեդ**

1979թ. իրադարձություններից հետո Իրանում ԱՄՆ-ի նկատմամբ վերաբերմունքը տեղավորվեց «մեծ շեյթան» ձեւակերպման մեջ, իսկ Իրանը հաստատուն տեղ գրավեց ամերիկացիների կողմից հորինված «չարիքի առանցքի» վրա: 1997թ. Իրանում Մոհամադ Խաթամիի գլխավորությամբ իսլամական ազատականների իշխանության գալուց հետո երկկողմանի հարաբերությունների կարգավորման հույս առաջացավ, որը տարբեր պատճառներով իրականություն չդարձավ: 2005թ. նախագահ Մահմուդ Ահմադինեժադի գլխավորությամբ նեոպահլավականների կողմից վճռորոշ դիրքեր գրավելը նոր գույներ ավելացրեց Իրան–ԱՄՆ առճակատմանը:

Սակայն արդեն նախորդ տարվանից Իրանում կրկին խոսեցին մերձեցման հնարավորության մասին, հատկապես եռանդագին կերպով Իրանի կողմից պաշտոնապես հայտարարվող՝ Իրաքում իրադրության կարգավորմանն օժանդակելու հնարավորության խորապատկերի վրա: Իրանա–ամերիկյան երկխոսության հաստատման վերջին փորձը նախատեսված էր այս տարվա մայիսի 3-4-ը եգիպտական առողջարանային քաղաք Շարմ աշ-Շեյխում կայացած կոնֆերանսում, որտեղ գլխավոր թեման դարձավ Իրաքի անվտանգության խնդիրների քննարկումը եւ նրա հետպատերազմյան վերակառուցումը: Իրանում իսլամական հանրապետության վարչակարգի հաստատումից հետո՝ շուրջ երեք տասնամյակի ընթացքում դա կարող էր լինել նման առաջին հանդիպումը: Դատելով իրանական մամուլի անդրադարձից՝ այդ կոնֆերանսի նախօրեին Թեհրանում հանդգլված չէին ԱԳՆ ղեկավար Մանուչեհր Մոթաքիի եւ նրա ամերիկյան գործընկեր Քոնդոլիզա Ռայսի հանդիպման անհրաժեշտության մեջ, քանզի մինչ օրս Իրանում շատերը չեն ընդունում իրենց գլխավոր հակառակորդի հետ մերձեցման գաղափարները: Կղերական ճամբարի նշանավոր քաղաքական գործիչներից Ալի Աղա-Մոհամադին կոնֆերանսի բացման նախօրյակին հայտարարեց, թե եգիպտոսում ԱՄՆ-ի հետ ոչ մի բանակցություն չի լինի այնքան ժամանակ, քանի դեռ ԱՄՆ-ը չի հաղթահարել Իրանի հանդեպ թշնամությունը: Միեւնույն ժամանակ, նախագահ Ահմադինեժադը Շարմ աշ-Շեյխի հանդիպումից մի քանի օր առաջ իր ելույթներից մեկում մեկ անգամ եւս պաշտոնապես հաստատեց

Վաշինգտոնի հետ երկխոսության իր երկրի պատրաստակամությունը: Այնուամենայնիվ, շոգ Շարմ աշ-Շեյխուն սառույցը չչարժվեց: Բ.Ռայսը, պատասխանելով այն հարցին, թե իրեն հաջողվեց, արդյոք, գրուցել Իրանի ԱԳՆ ղեկավարի հետ, ասաց, որ կոնֆերանսում դրա համար հարմար առիթ չգտնվեց: Ամենայն հավանականությամբ, ԱՄՆ-ում հուլյս էլ չունեին, թե նման հանդիպման ընթացքում /ու նման ձեւաչափով/ ամերիկա-իրանական հարաբերություններում իրոք կարող է ճեղքում տեղի ունենալ: Բացի այդ, Թեհրանում ԱՄՆ-ին ընդառաջ գնալու գաղափարը դեռ այնքան էլ ժողովրդականություն չի վայելում, եւ իրանական դիվանագիտությունը մինչ օրս չի մշակել ԱՄՆ-ի հետ երկխոսության ռազմավարություն, որը, ինչպես ընդունում են իրանցի ողջամիտ շատ քաղաքական գործիչներ, ժամանակն է սկսել: Միաժամանակ, հարկ է նշել երկկողմանի շփումների առկայությունը, մասնավորապես, արդեն այս տարի Բաղդադում Իրանի եւ ԱՄՆ դեսպանների հանդիպումների երկու փուլերը՝ փորձելու գտնել իրանական ճգնաժամից դուրս գալու համատեղ ուղիներ:

Վերջին ամիսներին երեւացին ԱՄՆ-ի կողմից Իրանի նկատմամբ դիրքորոշման խստացման հստակ նշաններ: Այն դրսեւորվեց, մասնավորապես, օգոստոսի 29-ին Ռինո քաղաքում /Նեւադա նահանգ/ վետերանների «Ամերիկյան լեգեոն» կազմակերպության անդամների առջեւ նախագահ Բուշի ելույթում: Բուշը հայտարարեց, թե Իրանի կողմից միջուկային զենքի ստեղծումը մերձավորարեւելյան տարածաշրջանին սպառնում է «միջուկային Չոլոքոստով» եւ հանդիսանում է ոչ թե տեղային, այլ գլոբալ խնդիր: Բուշն ասաց, որ ԱՄՆ-ը կդիմակայի այդ վտանգին, քանի դեռ ուշ չէ: Բուշի խոսքերով՝ այն, ինչ տեղի է ունենում Իրաքում, անմիջական առնչություն ունի մերձավորարեւելյան տարածաշրջանի ապագայի հետ: Նա ավելացրեց, որ Իրաքից ամերիկյան զորախմբի վաղաժամ դուրսբերման հետեւանքը կլինի Իրանի կողմից միջուկային զենքին տիրելու արագացումը: Այն իր հերթին հղի է տարածաշրջանի այլ երկրներում, ինչպիսիք են Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան, Չորդանանը եւ մյուսները, միջուկային զենքի տարածման շղթայական ռեակցիայով: Այս կապակցությամբ Բուշը մեկ անգամ եւս շեշտեց այն վտանգը, որը ողջ տարածաշրջանին բերում է Իրանի ռազմականացումը, եւ համաշխարհային ընկերակցությանը համախմբման կոչ արեց, որպեսզի Իրանի մեկուսացումը եւ նրա նկատմամբ կիրառվող տնտեսական պատժամիջոցները լինեն հնարավորինս արդյունավետ:

Վերլուծական հանրությունը տարբեր կերպ է մեկնաբանում ամերիկյան նախագահի արտահայտությունների ավելի խիստ, քան

տվորական տոնայնությունը: Հնարավոր է, դրանք նշանակում են Իրաք Իրանի թափանցմանը վերջ դնելու վճռականություն, ընդ որում՝ օգտագործելով ռազմական ուժ: Այդպիսի ենթադրության օգտին են խոսում նաև Իրաքում ռազմական գործողությունների համար ամերիկյան նախագահի կողմից ԱՄՆ Կոնգրեսից պահանջված 50 մլրդ դոլար լրացուցիչ հատկացումները:

Սակայն Բուշի ելույթը կարելի է մեկնաբանել նաև որպես Իրանի միջուկային խնդրի լուծման գործում ամերիկյան վարչակազմի կողմից ուժի օգտագործման պատրաստության խոստովանություն: Նման՝ ոչ խաղաղ ճանապարհով է ԱՄՆ-ը ցանկանում վերջ դնել Իրանի՝ տարածաշրջանում խաղաղության ճակատագրի համար վտանգավոր ուղիով շարժմանը, մինչև նա իրականորեն կդառնա միջուկային ակունքի անդամ: Նախկինում Բուշն այս խնդրի լուծման մեջ ռազմական բաղադրիչի մասին այդպես ուղղակիորեն չէր արտահայտվում: Սակայն նրա վերջին արտահայտություններում կարելի է տեսնել նաև անդրադարձը մի քանի օր շուտ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի՝ Իրաքից գորքերը դուրս բերելու ԱՄՆ-ին ուղղված կոչին: «Իրանը տիրապետում է բավարար ուժի, որպեսզի լրացնի առաջացող վակուումը»: Ըստ էության, դա հաստատումն էր Բուշի վարչակազմի արտահայտած այն մտավախության, թե Իրաքից ԱՄՆ ցանկացած բացակայություն կհանգեցնի առաջացած դատարկություններում իրանական ուժերի տեղակայմանը:

Հնարավոր է, խոսքը նաև այն մասին է, որ ԱՄՆ նախագահը նախընտրում է իր պաշտոնավարման մնացած մեկուկես տարում Իրանը հռչակել որպես Իրաքում եւ, ընդհանրապես, մերձավորարեւելյան տարածաշրջանում իրավիճակի ապակայունացման գլխավոր գործոն: Այս համատեքստում նա համարում է, որ տվյալ աշխարհաքաղաքական տարածությունում իրադրությունը կայունացնելու այլ ուղի չկա, բացի Իրաքում իրանական միջամտության կանխումը եւ ռազմական գործողության ճանապարհով նրա միջուկային ծրագրի սանձումը:

Իրանում, սակայն, գերակշռում է այն տեսակետը, թե խրվելով իրաքյան «ճահճում»՝ ԱՄՆ-ը ի վիճակի չէ Իրանի դեմ ռազմական գործողություն ձեռնարկել: Մյուս կողմից՝ իրանական լրատվամիջոցները ենթադրում են, որ հենց իրաքյան «մրցուղու» վրա անհաջողությունները կպայմանավորեն ամերիկյան ներկայիս վարչակազմի փորձը՝ պաշտոնավարման ավարտական փուլում իրանական միջուկային օբյեկտների դեմ կայծակնային ռազմական գործողությունում թեթև ու արագ հաղթանակով բարձրացնել իր ժողովրդականությունը:

ԱՄՆ-ին նման քայլի դրդում է միջազգային կառույցների կողմից Իրանից բխող՝ գլոբալ կայունությանը նետված մարտահրավերների նվազեցմանն ուղղված ներգործության միջոցների կիրառման անարդյունավետությունը: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի վերջին բանաձեւերն արդեն իսկ ապացուցեցին իրենց ոչ պիտանելիությունը եւ Իրանում ընկալվում են որպես թղթի սովորական կտորներ: Հենց այդպես դրանց բնութագրեց նախագահ Մահմուդ Ահմադինեժադը: Նույնքան «արդյունավետ» են նաեւ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության զեկույցները, որոնք նրա գլխավոր տնօրեն Մուհամեդ էլ-Բարադեյի ջանքերի շնորհիվ ավելի շատ հիշեցնում են պայմանագրեր Իրանի եւ ՄԱԿ-ի այդ մասնագիտացված կազմակերպության միջեւ, որի՝ իրանական ատոմային օբյեկտների տեսչության գծով գործունեությունը համաշխարհային ընկերակցությանն անենելին էլ չի մոտեցնում ամբողջական տեղեկատվության տիրապետմանը /օրինակ, ի՞նչ ուղղությամբ է ընթանում Իրանը՝ խաղաղ միջուկային էներգետիկայի<sup>օ</sup>, թե՞ հետեւողականորեն ատոմային ռումբի ստեղծման/:

Իրանական ատոմային խնդրի խաղաղ լուծման ուղղությամբ ձեռնարկված փորձերի փակուղային վիճակի ընկալման գործում ԱՄՆ-ը բնավ էլ միայնակ չէ: Նրա հետ համերաշխ է Ֆրանսիան, որի նոր նախագահ Նիկոլա Սարկոզին Վաշինգտոն օգոստոսյան այցի ժամանակ արտահայտվեց այդ խնդրի խաղաղ լուծման հետ մեկտեղ նաեւ ռազմական ուղու հնարավորության օգտին: «Le Monde»-ի սեպտեմբերի 1-ի հաղորդագրության համաձայն՝ այդ օրերին Սարկոզին հայտարարել է, թե Իրանի ատոմային ծրագրի սանձման համար հարկ չկա սպասել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հերթական որոշմանը: Անհրաժեշտ է անմիջապես անցնել կոշտ պատժամիջոցների, իսկ հետո՝ եւ վերջին հնարավոր ուղուն: Նման կոշտությունն ընդունում է նաեւ Մեծ Բրիտանիայի վարչապետ Գորդոն Բրաունը:

Իրանի հանդեպ ամերիկյան քաղաքականության նոր կոշտ շրջադարձը, ինչպես մեզ թվում է, խիստ անսպասելի էր իրանական ղեկավարության համար: Դրանով է, հավանաբար, բացատրվում այն փաստը, որ վերջինս դեռեւս միանշանակորեն չի արձագանքել Բուշի աննախադեպ կտրուկ հայտարարություններին: Հազիվ թե արժե բավարար անդրադարձ համարել ԱԳՆ մամուլի խոսնակ Մոհամադ-Ալի Հոսեյնիի հերթապահ ելույթը, որը Սպիտակ տան ղեկավարի արտահայտությունները բնութագրեց որպես սովորական հնաոճ հերյուրանք: Բուշի արտահայտությունների նկատմամբ իրանական դիրքորոշումը չի արտացոլվում նաեւ Իրանի խորհրդարանի Ազգային անվտանգության եւ արտաքին

քաղաքականության հարցերով հանձնաժողովի քարտուղար Քազեմա Ջալալիի խոսքերում, որը նշեց, թե հենց ԱՄՆ-ը ինքն է սերտ համագործակցում «Ալ-Կաիդայի» հետ Իրաքում եւ «Թալիբան» արմատական շարժման հետ՝ հանդիսանալով նրանց բարոյական ու նյութական հովանավորը:

Սակայն Թեհրանից հնչում են եւ առողջ ձայներ: ISNA լրատվական գործակալության հաղորդագրության համաձայն, օգոստոսի 31-ին, Մեշխեդ քաղաքում, հանդես գալով ուսանողների առջեւ, Իրանի նախկին նախագահ Ալի-Աքբար Յաշեմի-Ռաֆսանջանին զգուշացրեց իրանական ատոմային ծրագիրն ազգային առաջնահերթությունից ազգային աղետի վերածվելուց: Թեհրանի համալսարանի քաղաքագիտության պրոֆեսոր եւ Ռաֆսանջանիի համախոհ Սադեկ Ջիբաքալամը Aftabnews լրատվական ինտերնետ-պորտալին տված շաբաթօրյա հարցազրույցում ասաց, որ հենց միջուկային ծրագրի շուրջ է անցնում ԱՄՆ-ի ու Իրանի միջեւ ջրբաժանը: «Չատկապես Ահմադինեժադի գլխավորությամբ արմատականների իշխանության գալուց հետո է այդ կետում սաստկանում դիմակայությունը, ինչը հղի է իրանական ժողովրդի ազգային շահերին սպառնալիքով»:

Այսպիսով, ԱՄՆ եւ Իրանի դիմակայությունում սկսվում է առճակատման նոր փուլ: Ինչի՞ այն կհանգեցնի՝ դա ցույց կտա ամենամոտ ապագան:

[www.iimes.ru](http://www.iimes.ru)

**Մերձավոր Արեւելքի ինստիտուտ**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Տերտերյան ԹԵՐԱՐԺԵՌՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՈՒՄԻ ԵՎ «ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ» ՄԱՍԻՆ .....	1
Ռուբեն Մելքոնյան ԱՐԱԲԱՑԱԾ ՀԱՅԵՐ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ .....	5
Հովհաննես Հովհաննիսյան ՀԱՅ ՄՈԼՈԿԱՆՆԵՐ .....	10
Բենեդեկ Ժիգմոնդ ՀՈՒՆԳԱՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ. ԱՆՑՅԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ .....	14
Գագիկ Տեր-Հարությունյան ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԳՆԱԺԱՄԻ ԱՑԵՆԱՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ .....	20
Դավիթ Հովհաննիսյան ՈՌԻՍԱՏԱՆՅԱՆ ՎԵՐՋԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ .....	24
Արաքս Փաշայան ԱԲԴՈՒԼԼԱՀ ԳՅՈՒԼԻ ՀԱԴԹԱՆԱԿԸ. ԹՈՒՐՔԻԱՆ ԻՍԼԱՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ...	29
Սարգիս Հարությունյան ՄԵՐՋԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ .....	34
Սեւակ Սարուխանյան ԻՐԱՆ. ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ .....	39
Վլադիմիր Մեսամեդ ԱՄՆ–ԻՐԱՆ ԱՌՃԱԿԱՏՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼ .....	44

*Շապիկի վրա պատկերված է  
Օձասարը (Նախիջեւան)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Սելիք-Աղանյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՄՍ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: